



«Վերածնունդ» հոգևոր գարգացման կենտրոն

ՏԻԵԶԵՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բացարձակ-Հոր ուղերձը

ՏԻԵԶԵՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բացարձակ-Հոր ուղերձը

Ընդունեց Մարթան

2016 թ. հունվարի 14 – դեկտեմբերի 9 ժամանակաշրջանում

Բովանդակություն

Տիեզերքի հիմնական օրենքները.....	2
Ինչ է էներգիան	3
Երկրի նուրբ պլանի Աստվածային աստիճանավորությունը	6
Երկրի նուրբ և հոծ (ֆիզիկական) պլանների փոխազդեցությունը, կամ Անդրադարձման օրենքը.....	10
Լուսին.....	14
Արեգակ	16
Այլմոլորակային քաղաքակրթություններ և գալակտիկաներ.....	18
Զուգահեռ աշխարհներ.....	19
Երազների աշխարհներ.....	21
Ջրի պահապանների աշխարհը.....	23
Մարդկային ռասայի ծագումը.....	24
Մարդկային ռասայի ծագումը (շարունակություն)	27
Ամեն ինչ վերադառնում է ի շրջանս յուր	28
Գլորիա մոլորակը	30
Էներգետիկական միասնությունը Տիեզերքի հետ	31
Էներգետիկական փոխներգործության մասին.....	33
Էներգետիկական փոխներգործության մասին (շարունակություն)	35
Բնության տարերքներ	37
Բնության տարերքներ. ՕԴ	38
Բնության տարերքներ. ՀՈՂ <ԵՐԿԻՐ>.....	40
Բնության տարերքներ. ԿՐԱԿ.....	41
Բնության տարերքներ. ՍԵՐ.....	43

Տիեզերքի հիմնական օրենքները

Գոյություն ունի Տիեզերքի երեք հիմնական օրենք, որոնցից առաջ են գալիս մյուս օրենքները:

Առաջին. Ինչ վերնում է, այն էլ ներքևում է, կամ՝ Արտաքինն անդրադարձնում է Ներքինը:

Երկրորդ. Նմանը միշտ ձգում է նմանին, կամ՝ Էներգիաներն առձգվում են ըստ թրթռանքի <вибрация>:

Երրորդ. Ամբողջականության և Միասնության օրենք, կամ՝ Տիեզերքում ամեն ինչ Միասնական Ամբողջի մասնիկն է:

Իսկ այժմ ավելի հանգամանորեն անդրադառնանք նրանցից յուրաքանչյուրին:

Առաջին օրենք

Այս օրենքից բխում են պատճառ-հետևանքային կապերը, որոնք բազմաթիվ են, և նրանց մեջ գլխավորն այն է, որ ձեր կյանքում կատարվող բոլոր իրադարձությունները ձեր իսկ ներքին վիճակի արտացոլանքն են՝ ձեր մտքերի, հույզերի և զգացմունքների: Նշանակում է՝ ձեր բոլոր դժբախտությունների և տառապանքների պատճառը հարկավոր է փնտրել ՄԻՄԻԱՅՆ ձեր մեջ:

Երկրորդ օրենք

Ձեր շրջապատում ամեն ինչ արտացոլում է ձեր հոգևոր զարգացման մակարդակը, այսինքն՝ ձեր թրթիռների մակարդակը: Եվ եթե այն չի գոհացնում, ուրեմն պիտի աշխատեք ձեզ վրա, որպեսզի վեր բարձրանաք, և այդ ժամանակ կփոխվի ձեր կյանքը, կփոխվեն և մարդիկ ձեր շուրջը, և ամեն ինչ այլ գույներով կշողա: Եվ դուք ի գործ եք դա անելու, սիրելիներ՝ րա:

Երրորդ օրենք

Այս օրենքը, թերևս, ամենաբարդն է ձեր հասկացողության համար, սակայն նա, ով լիովին կըմբռնի այն, իսկական երջանկության կարժանանա:

Բանն այն է, զավակներս, որ երկար ժամանակ երկվության աշխարհում <в дуальном мире> լինելով՝ դուք կորցրել եք ձեր Ընդհանուր Տանը մաս կազմելու զգացումը, մոռացել եք, որ բոլորդ էլ վիթխարի Տիեզերքի մասնիկներն եք՝ զատված նրանից ձեր Հոգու փորձառությունը ձեռք բերելու համար:

Եվ այնքան կարևոր է հասկանալ, որ ամբողջի մասնիկը չի կարող իսկապես երջանիկ լինել, եթե դժբախտ են մյուս մասնիկները: Դրա համար էլ ասվում է՝ «Մի՛ր մերձավորիդ քո անձի նման»: Բայց համաձայնեք, զավակներս, որ անչափ դժվար է դա:

Եվ այդուհանդերձ նա, ով հասու կդառնա այդ արտահայտության ամբողջ խորությանն ու իմաստությանը, կձանաչի իր իսկ Աստվածային էությունը և իսկական երջանկություն կգտնի:

Ինչ է էներգիան

Այսօր մեզ շատ լուրջ գրույց է սպասում, քանի որ ուզում եմ ձեզ պատմել, թե ինչպես է կառուցված աշխարհը, ինչից է այն ստեղծված, ինչ է էներգիան, նուրբ էներգատեղեկատվական կառուցվածքները: Կշանամ բացատրել հնարավորինս պարզ, քանզի ուզում եմ, որ հասկանալի լինի յուրաքանչյուրիդ՝ անկախ ճշգրիտ գիտությունների ձեր իմացությունից:

Եվ այսպես, սկսենք նրանից, որ ձեր Տիեզերքում ամեն ինչ էներգիա է: Գիտնականներն իրենց սահմանում են տալիս այդ հասկացությանը, բայց իրականում ամեն ինչ շատ ավելի պարզ է, քան նրանց է թվում, և միևնույն ժամանակ շատ ավելի բարդ, որովհետև այս սուբստանցը սահմաններ չի ճանաչում, անվերջ է ժամանակի և տարածության մեջ:

Պարզագույն լեզվով եթե ասենք՝ էներգիան մի բան է, որն ունակ է փոխակերպվելու, ամենայն գոյողի նախահիմքն է, բացարձակապես ամեն ինչի մեկնակետը՝ մտքի, զգացմունքի, գործողության, հույզի:

Էներգիաները լինում են դրական և բացասական, ինչպես տարալիցք մասնիկները, և սրանց նման էլ վանում են միմյանց առաջին իսկ հպման դեպքում:

Էներգիաները լինում են **գիտակից** և **անգիտակից**: Անգիտակից էներգիաները շատ փոքր մաս են կազմում, նրանցից է, օրինակ, ձգողության էներգիան, որը կապված է երկրի գրավիտացիոն դաշտի հետ, և էլի մի քանի նմանատիպ էներգիաներ, ինչպես բաշխման էներգիան և մեկ ամբողջի պատկանելության էներգիան:

Մենք մանրամասն կանգ կառնենք այն էներգիաների վրա, որոնք հանդիպում են ձեր առօրյա կյանքում և պրակտիկ նշանակություն ունեն ձեզ համար:

Փորձեմ բացատրել, թե ինչպես է ձևավորվում նյութը <մատերիան> և ինչից է կազմված մարդը: Այն ամենը, ինչ գոյություն ունի երկրի վրա, տարատեսակ էներգիաների խտացում է, որը թույլ է տալիս նյութականանալու տվյալ օբյեկտին, այդ թվում՝ մարդուն: Ինչպե՞ս է դա կատարվում:

Սկզբում հայտնվում է նուրբ պլանում: Դուք կգարմանաք, բայց նույնիսկ անշունչ իրերն ունեն իրենց էներգա-տեղեկատվական կառուցվածքը, այսինքն՝ նուրբ մարմինները, ուրեմն և իրենց սեփական էներգետիկան:

Բայց նախ եկեք քննության առնենք մարդու էներգետիկական կառուցվածքը: Սկսենք բեղմնավորման պահից, որը կատարվում է հզոր էներգետիկական արտազեղման և արական ու իգական էներգիաների միացման արդյունքում: Այնուհետև տեղի է ունենում մի բան, որը հիշեցնում է հետևյալը. խտությունը <плотность>, որտեղից պատրաստվում է մարմնավորվել հոգին, սկսում է էներգապես հարմարվել երրորդ խտության աշխարհին, որում նա պիտի ապրի:

Դա չափազանց բարդ, կարելի է ասել՝ սրբազան պրոցես է, որովհետև հաճախ Երկիր են իջնում վսեմագույն հոգիներ, որոնք ընտրել են Ծառայությունը հանուն մարդկության փրկության,

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Երբեմն էլ, ընդհակառակը, այստեղ գալիս են հոգիներ ավելի ստորին խտության աշխարհներից, որպեսզի բարձրանան իրենց հոգևոր զարգացման նոր աստիճանին:

Երբեմն էներգիաների տարաձգությունը վիթխարի է լինում, և որպեսզի նմանը ձգի նմանին, այսինքն՝ երրորդ խտության մեջ ապրող մոր արգանդն ի վիճակի լինի իր մեջ ընդունելու թրթռանքով իրենից չափազանց տարբեր էակի, տրվում է մանկան հասունացման այդպիսի տևական ժամկետ,- որպեսզի ավելի բարձր չափումներից եկած հոգին կարողանա խտանալ մինչև երրորդ չափման աշխարհը, և հակառակը: Այդպիսով տեղի է ունենում մոր և մանկան էներգետիկական փոխներթափանցում:

Հիմա տեսնենք, ինչպես է ձևավորվում մարդու էներգա-տեղեկատվական կառուցվածքը: Այս պրոցեսն է՝ ավելի դժվար է բացատրել, որովհետև ձեր նուրբ մարմիններն արդեն Աստվածային ասպեկտին են վերագրվում և կրում են իրենցում Աստծո մասնիկը, որը խարսխված է յուրաքանչյուրիդ մեջ:

Մարդու էներգա-տեղեկատվական կառուցվածքը նույնպես էներգիա է, սակայն՝ ոչ բոլորովին խտացած մինչև երրորդ չափման աշխարհը: Կարելի է ասել, այն մասնակիորեն մնում է չորրորդ չափման աշխարհում, իսկ ոմանց պարագայում, որոնք շատ բարձր հոգևոր մակարդակ ունեն՝ ավելի բարձր աշխարհներում: Սակայն նման մարդիկ խիստ փոքրաթիվ են և ավելի շուտ բացառություն են կազմում ընդհանուր կանոնից: Իսկ մարդկանց մեծ մասի նուրբ մարմինները խտանում են մինչև առավելագույն թույլատրելի մակարդակը և գործնականորեն կորցնում իրենց կապը Տիեզերքի Աստվածային պլանի հետ:

Եթե շատ պարզ լեզվով արտահայտվենք, մարդկանց նուրբ մարմինները տարբեր թանձրության նոսր էներգիա են: Որքան ավելի հոգևոր է մարդը, այնքան նոսր են նրա նուրբ մարմինները, այսինքն՝ ավելի մեծ ծավալ ունեն և ավելի շատ Աստվածային էներգիա են պարունակում:

Իսկ հոգեպես չզարգացած, խիստ հողեղեն և նյութապաշտ մարդկանց նուրբ մարմինները բառիս բուն իմաստով ճզմվում են՝ գրեթե միաձուլվելով ֆիզիկական մարմիններին:

Այժմ ցանկանում եմ խոսել այն մասին, թե ինչպես կարող է մարդը կառավարել իր էներգետիկական սուբստանցը: Քանի որ դրական և բացասական հույզերի էներգետիկական լիցքը տարբեր է, մարդը կարող է փոխել իր էներգիան մտքի ուժով:

Տիեզերքի ամենահզոր էներգիան **Միքո էներգիան** է: Նա ի գործ է իսկական հրաշքներ գործելու: Հենց նա՝ կարող է փոխել մարդու էներգետիկական կառուցվածքը՝ «նոսրացնելով» մինչև Աստվածային վիճակը:

Եվ հակառակը, բացասական էներգիաները,- չարությունը, նախանձը, ատելությունը և այլն,- թանձրացնում են մարդու նուրբ մարմինները՝ նրան զրկելով ի բնե իրեն հատուկ Աստվածային էներգիայից:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Իսկ հիմա բացատրեմ, ինչպես են ձևավորվում անշունչ իրերի էներգա-տեղեկատվական կառուցվածքները: Անշուշտ, նկատի ունեմ մարդու ձեռքով ստեղծված բաները, որովհետև ողջ մնացյալը ի սկզբանե կենդանի է և ունի իր սեփական էներգիան:

Ամեն ձեռակերտ առարկա,- ամենապարզ կերակուրից մինչև բարդագույն մեխանիկական սարքավորում,- ՄԻՇՏ կրում է այն մարդու կամ մարդկանց էներգիան, որոնք աշխատել են իր վրա: Հենց այդ էներգիան էլ կազմում է տվյալ առարկայի էներգա-տեղեկատվական դաշտը:

Եվ հենց այդ պատճառով էլ սիրով պատրաստված իրերը ամենաբարձր թրթռանքով էներգիայի կրող են և ուրախություն են պարգևում մարդկանց, իսկ այն, ինչ սարքվում է հապճեպորեն, անտարբերությամբ, ապաշնորհ կերպով՝ առանց հոգի ներդնելու, այդպես սառն ու հոգեզուրկ էլ մնում է՝ անկարող երջանիկ դարձնելու մարդուն:

Թեպետ, շատ բան էլ կախված է նրանից, թե ինչ ձեռք կրնկնի առարկան: Օգտագործողի էներգիան իր ուղղումներն է ներմուծում, այսինքն՝ իր էներգիան, և եթե դա Սիրո էներգիա է, կարող է «բուժել» առարկան, և հակառակը՝ սիրով պատրաստված, սակայն վատ ձեռքում հայտնված իրը կարող է տկարանալ:

Հետևաբար մի՛շտ հիշեք, սիրելիներ՝ ու, թե ինչ մեծ պատասխանատվություն եք կրում ձեր ձեռքն ընկած, ձեր պատրաստած բոլոր իրերի համար. դրանք շարունակում են աշխարհի ներքերել հենց ձեր էներգիան:

Անշուշտ, ամենից հեշտորեն կարելի է զգալ ստեղծագործությունների էներգիան՝ երաժշտության, գրականության, պոեզիայի, գեղարվեստի, մի խոսքով՝ արվեստի բոլոր տեսակների, քանզի ամեն մեկի հոգում նրանք արձագանքում են միանգամայն որոշակի թրթռանքով, որն էլ այս կամ այն էներգիայի գլխավոր ինդիկատորն է:

Սակայն իմացեք, որ ամենաչեզոք, ձեր կարծիքով՝ ամենաանշունչ իրերն անգամ արձագանքում են ձեր վերաբերմունքին, այսինքն՝ ձեր հղած էներգիային:

Դա հատկապես պարզորոշ է արտահայտվում տարատեսակ տեխնիկայի՝ համակարգչի, մեքենայի, հեռախոսի հետ ունեցած ձեր փոխհարաբերություններում: Երբեք մի՛ դժգոհեք նրանցից և մի՛ հայհոյեք, այլապես ձեզ նույն կերպ կպատասխանեն. դուք նրանցից դեպի ձեզ կձգեք այն էներգիան, որը «պարզնել» եք նրանց, և իրերը կսկսեն փչանալ, կամակորություն անել ու հոգս պատճառել: Չէ՞ որ ձեր կյանքում արդեն եղել է նման բան: Եվ դուք արդեն գիտեք, որ արտաքինը միշտ անդրադարձնում է ներքինը, իսկ այդ օրենքի էությունը էներգափոխանակությունն է:

Եվ վերջինը, որ կուզեի պատմել ձեզ այսօր, ձեր մոլորակի էներգետիկական կառուցվածքի մասին է: Մոլորակը, մարդու նման, ունի թե՛ ֆիզիկական մարմին, թե՛ նուրբ մարմիններ: Բայց, ի տարբերություն ձեզ, նրա նուրբ մարմիններն անփոփոխ են, քանզի գտնվում են արդեն Աստվածային տարածքի հարթությունում, և այդուհանդերձ շատ մեծ է մոլորակի վրա ապրող մարդկանց ազդեցությունը նրանց վրա:

Ձեր բոլոր բացասական մտքերը, զգացմունքներն ու արարքները խաթարում և ապականում են նրա էներգա-տեղեկատվական տարածությունը, և իրեն մաքրելու համար նա ստիպված է լինում ձեզ նույն կերպ պատասխանել՝ տարերային արհավիրքներով ու տեխնածին աղետներով, չէ՞ որ Տիեզերքի օրենքն անփոփոխ է և ամենագոյնի։ արտաքինը միշտ անդրադարձնում է ներքինը, թե՛ մեծ, թե՛ փոքր բաներում։ Միշտ հիշեք այս մասին, զավակներս։

Այսօր կսահմանափակվենք այսքանով։

Երկրի նուրբ պլանի Աստվածային աստիճանավորությունը

Երկրի նուրբ պլանի տասներկու մակարդակները

Այսօր մենք կշարունակենք մեր զրույցը աշխարհի կառուցվածքի մասին, և ես մանրամասն կնկարագրեմ նրա տասներկու խտությունները <плотности>։

Ինչպես իմացաք նախորդ ուղերձից, որտեղ բացատրվում էր, թե ինչ է էներգիան, տարբեր խտությունների մակարդակը որոշվում է էներգիայի հոծությամբ, այսինքն՝ որքան վերնում է խտությունը, այնքան նոսր է էներգիան։

Նույնը կկատարվի և ձեր ֆիզիկական մարմինների հետ, երբ դուք վերջնականապես տեղափոխվեք Հինգերորդ չափման աշխարհ։ Ձեր մարմինները կդառնան էներգապես նոսր՝ ձկուն ու դյուրաշարժ, որը թույլ կտա փոխել նրանց ձևը ըստ ձեր ցանկության։

Իսկ այժմ ուզում եմ պատմել Աստվածային «աստիճանավորության» մասին, որպեսզի ընդհանուր գծերով պատկերացնեք, թե ինչպես է կառուցված ձեր մոլորակի նուրբ պլանը։

Պարզության համար պատկերացրեք Երկիրը ձեզ համար սովորական՝ գլոբուսի տեսքով, և թող դա լինի նրա ֆիզիկական մարմինը։

Իսկ շուրջը պատկերացնենք թաղանթներ, ընդ որում, յուրաքանչյուր թաղանթ երկրաչափական պրոգրեսիայով ավելի ու ավելի հեռու է նախորդից։ Դա բացատրվում է նրանով, որ խտության ամեն նոր մակարդակ ներկայացնում է ավելի ու ավելի նոսր սուբստանց կամ այլ կերպ ասած՝ թրթիռների ավելի ու ավելի բարձր մակարդակ։

Երկիրն ունի տասներկու այդպիսի թաղանթ։ Ես համառոտ կպատմեմ դրանցից յուրաքանչյուրի մասին։

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Առաջին թաղանթը ներկայացնում է այն խտությունը, որտեղ բնակվում են ամենաստորին աստրալի էությունները՝ լիակատար և վերջնական դեգրադացման հասած հոգիները: Այս հոգիներին այլևս հնարավոր չէ փրկել, այնքան որ մեծ է նրանց անկումը, և այստեղ կատարվում է օգտագործված նյութի յուրատեսակ ուտիլիզացում: Այս խտությունը նման է սև ու խլրտուն քստմենթի զանգվածի:

Երկրորդ խտությունն այն տեղն է, ուր ընկնում են ամենաստոր կրթերից չձերբագատված, բայց առնվազն ազատվելու փորձ արած հոգիները: Եվ նրանց այդ ցանկությունը թույլ է տվել պահպանել իրենց հոգիները և հաջորդ կյանքերում շարունակել պայքարը դրանց համար:

Այս խտությունում բնակվող հոգիներն ամենաշատն են տանջվում: Ձեր կրոններում հենց սա է նկարագրվում որպես Դժոխք: Այստեղ «երևակվում» են հոգուն բնորոշ բոլոր արատները, և հոգին «խտացած» ձևով ապրում է բոլոր այն տառապանքները, որ Երկրի վրա ինքն է պատճառել ուրիշներին:

Գնում է տաժանագին ուսուցում, բայց դուք պիտի հասկանաք, սիրելիներս, որ ես չեմ պատժում մարդկային հոգիներին, ոչ էլ որևէ այլ ոք: Բանն այն է, որ այստեղ սաստկացած ռեժիմով աշխատում է Անդրադարձման օրենքը, որը գործում է Երկրի ոչ միայն հոծ, այլև նուրբ պլանում: Այդպես ամեն հոգի ստանում է այն, ինչ առձգել է իրեն. իր ծնունդների միջև ընկած ժամանակաշրջանում նա դարձյալ շարունակում է աշխատել իր չյուրացրած դասերի վրա:

Երրորդ խտությունը այն մակարդակն է, ուր ընկնում է մարդկային հոգիների մեծ մասը երկրային պլանը լքելուց հետո: Սա հենց այն «միջին» մարդն է՝ քաղթենին, որը չի տրվում ավելորդ կրթերի, սակայն ապրում է իներցիայով, ինչպես բոլորը, ինչպես ընդունված է, որի հոգին դեռ չի արթնացել և որն ամենևին պատրաստ չէ գիտակցելու սեփական անհատականությունը և բռնելու հոգևոր զարգացման ուղին:

Շատերի կեցությունն այս խտությունում նույնքան ձանձրալի ու գորշ է, որքան և Երկրի վրա էր, բայց այստեղ նրանց շանս է տրվում ծանոթանալու Տիեզերքի օրենքներին և հասկանալու սեփական նախասահմանումը, այսինքն՝ հնարավորություն է տրվում «արթնանալու», և այս հոգիները շատերն արդեն գիտակցաբար են ընտրում իրենց հաջորդ մարմնավորումն ու այն դասերը, որ կցանկանային անցնել:

Չորրորդ խտությունը յուրահատուկ անցումային մակարդակ է՝ անգիտակից գոյությունից գիտակցականի: Այստեղ ընկնում են այն հոգիները, որոնք դեռ Երկրի վրա սկսել էին խորհել կյանքի իմաստի մասին, թե ինչի համար են իրենք ծնվել, որոնք կարողացել են կայանալ Երկրի վրա, բայց դեռ չեն ազատվել երկվորյան աշխարհի արատներից և ի վիճակի չեն եղել մինչև վերջ սանձելու իրենց էգոն:

Նման հոգիներին այստեղ տրվում են զարգացման ամենալայն հնարավորությունները, և իրենց հաջորդ ծնունդը նրանք ընտրում են արդեն միանգամայն գիտակցաբար, որպեսզի «աշխատեն սխալների վրա»:

Հինգերորդ խտությունը մեկնարկային հարթակ է այն հոգիների համար, որոնք հոգևոր զարգացման ուղին են բռնել և եկել առ Աստված միանգամայն գիտակցաբար, այլ ոչ թե

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Եկեղեցական ծեսերը կուրորեն կատարելով ու աղոթքներ սերտելով: Այս մարդկանց Երկրի վրա ասում են «ազատատենչ», «հոտից հեռացած»: Նրանց մեջ սկսել է արթնանալ իրենց Աստվածային էությունը, և ապրել են, ինչպես սիրտն է հուշել իրենց, այլ ոչ թե բանականությունը և առավել ևս՝ հանրային կարծիքը:

Եվ այս հոգիները, ժամանակավորապես հեռանալով Երկրի նուրբ պլան, իրենց համար մեծ արդյունավետությամբ են օգտագործում ծնունդների միջև ունեցած այդ դադարը: Նրանք անհագորեն կլանում են այդտեղ հասանելի տեղեկատվությունն իր ամբողջ ծավալով և ձգտում լրացնել Երկրի վրա բաց թողածը:

Շատ հաճախ նման հոգիները, ընտրելով իրենց հերթական ծնունդը, ձգտում են Երկիր վերադառնալ որոշակի առաքելությամբ, որ իրենց հաջորդ կյանքն ապրեն ուրիշներին օգտակար լինելով: Եվ հաճախ ծնվում են որպես ուսուցիչներ կամ բժիշկներ:

Վեցերորդ խտությունը մոտ է նրան, որ դուք անվանում եք Դրախտ: Այստեղ են ձգվում Ծառայության ելած մարդիկ, ովքեր ողջ իրենց երկրային կյանքը նվիրաբերել են ուրիշներին, բացահայտել են նրանց ճշմարիտ Աստվածային գիտելիքները և իրենց հետևից տարել ոգով մերձավորներին:

Դրանք մեծ ուսյալներն են, լուսավորիչները, մարդկային հոգու և մարմնի բժիշկները, այն մարդիկ, ովքեր կարողացել են դեմ գնալ հասարակությանը՝ նրա դարավոր կարծրատիպերին:

Նուրբ աշխարհում եղած ժամանակ նրանք գիտելիքներ են ստանում Տիեզերքի Բարձրագույն Ուժերից, որոնք պատրաստում են նրանց հետագա Ծառայության՝ արդեն ավելի բարձր մակարդակում:

Եվ սա այն սահմանագիծն է, որը թույլ է տալիս ընտրել՝ կա՛մ բարձրանալ ավելի վեր՝ յոթերորդ խտություն, և մնալ Ծառայելու Երկրի նուրբ պլանում, կա՛մ վերադառնալ Երկիր իրենց իսկ ընտրած առաքելությամբ՝ մարդկանց առ Աստված բերելու նպատակով:

Յոթերորդ խտությունը այն մակարդակն է, ուր ընկնում են Երկրի վրա երբևէ ապրած ամենավսեմ հոգիները: Նրանք, ովքեր հետագայում Սրբադասվում են, և նրանք, ովքեր ապրելով անձնվիրաբար ի բարօրություն մարդկանց, չեն արժանանում մեծ ճանաչման: Սա Լուսավորյալների մակարդակն է:

Ով Երկիր է իջնում արդեն այս մակարդակից, գալիս է հիրավի Մեծ Առաքելությամբ՝ մարդկությանը կեցության նոր մակարդակ բարձրացնելու կոչումով:

Եվ հիմա Երկրի վրա ապրում են բազում այդպիսի Մեծ Հոգիներ, քանզի եկել են ավարտելու այն, ինչ չի հաջողվել իրենց նախորդ մարմնավորումներում, երբ մարդիկ դեռևս պատրաստ չէին գիտակցելու իրենց Աստվածային ծագումը և ընդունելու ճշմարիտ Տիեզերական օրենքները:

Ութերորդ խտությունը երկնաբնակների մակարդակն է՝ Հրեշտակների և Հրեշտակապետերի, Համբարձյալ Վարպետների, բոլոր նրանց, որոնց դուք անվանում եք Լուսավոր Ուժեր և որոնք

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

ընտրել են Ծառայությունը Երկնքում՝ պահելով ու պաշտպանելով Երկրի վրա մարմնավորված մարդկային հոգիներին:

Նրա՛նց եք դիմում դուք ձեր աղոթքներում, նրա՛նք են հղում ձեզ Միրո Աստվածային էներգիան, նրա՛նք են ձեզ պաշտպանում վտանգից և գորավիզ լինում ձեր կյանքի ամենածանր պահերին: Եվ հենց նրա՛նք են իմ գլխավոր օգնականներն ու ներկայացուցիչները Երկնքում:

Նրանց կյանքը լեցուն է առաքինի գործերով, յուրաքանչյուրն անում է այն աշխատանքը, որ ինքն է ընտրել և որն առավելագույնս համապատասխանում է իր նախասահմանմանը: Սակայն դա բերկրալի աշխատանք է, որովհետև մխիթարություն ու Մեր է բերում մարդկանց, և դա էլ նրանց ամենամեծ պարգևն է:

Իններորդ խտություն: Այստեղ բնակվում են Բարձր Էություններ, որոնք կոչված են կարգավորելու նախորդ երեք՝ վեցից ութերորդ խտությունների թրթիռների մակարդակը և ըստ անհրաժեշտության շտկելու դրանք: Դա հարկավոր է այդ խտությունների միջև հավասարակշռություն պահելու համար, որովհետև նրանց սահմանները ճապաղված են և ամեն մեկի բնակիչները կարող են տեղաշարժվել բոլոր երեք խտությունների շրջանակում:

Դա նշանակում է, որ, օրինակ, վեցերորդ խտության Հոգիները ցանկության և որոշակի ջանքերի շնորհիվ կարող են աճել մինչև ութերորդ խտության մակարդակը, իսկ ութերորդի բնակիչներն ընդունակ են իջնելու մինչև վեցերորդը՝ այնտեղ գտնվող Հոգիներին ուսուցանելու համար:

Իսկ իններորդ խտության Էությունների աշխատանքն է ցածրացնել կամ, հակառակը, բարձրացնել «տեղափոխվողների» թրթիռները:

Տասներորդ խտությունը այն Աստվածային տարածությունն է, որտեղ գտնվում են զարգացման ամենաբարձր մակարդակ ունեցող մոլորակների լավագույն ներկայացուցիչները: Դա Համագալակտիկական Խորհուրդն է, որը հսկում է ավելի ստորին խտություններում գտնվող մոլորակների վիճակը: Այն որոշումներ է ընդունում վերջիններիս դրությունը շտկելու վերաբերյալ, եթե դա խիստ անհրաժեշտ է, այսինքն եթե նրանցում ստեղծվող իրավիճակը սպառնալիք է ներկայացնում Գալակտիկայի մյուս մոլորակների համար:

Տասնմեկերորդ խտությունը բնակավայրն է Հայր-Աստծու՝ ձեր Երկրի «վերակացուի», որն իրականացնում է Երկրի և նրան շրջապատող տասը խտությունների «գերագույն ղեկավարությունը»:

Եվ վերջապես **տասներկուերորդ խտությունը** իմ բնակավայրն է, որտեղից ես կարող եմ հետևել ինչպես ձեր Երկրի, այնպես էլ ձեր Գալակտիկայի և համայն Տիեզերքի բոլոր իրադարձություններին:

Ես ուզում էի, սիրելիներս, որ դուք ամբողջական պատկերացում ունենաք ձեր Երկրի նուրբ պլանի կազմության մասին, որպեսզի տեսնեք, թե ինչ լայն հորիզոններ են բացվում ձեր առջև և որ սահման չկա ձեր հոգևոր աճին, որ ձեզնից յուրաքանչյուրը կարող է Աստվածանալ:

Երկրի նուրբ և հոծ (ֆիզիկական) պլանների փոխազդեցությունը, կամ Անդրադարձման օրենքը

Այն, ինչ ասվեց իմ նախորդ երկու ուղերձներում,- էներգիաների և Երկրի նուրբ պլանի տասներկու մակարդակների մասին,- Տիեզերքի կազմությանը վերաբերող մեր գրույցի սկիզբն է միայն:

Եվ այսօր ես ուզում եմ շարունակել այն, մանրամասն ներկայացնելով այդ մակարդակներից ամեն մեկի անդրադարձը Երկրի ֆիզիկական պլանի, հետևաբար նաև յուրաքանչյուրիդ վրա:

Սկսենք նրանից, որ Տիեզերքում ամեն ինչ փոխկապակցված է, և նրա բոլոր բաղադրիչների ոչ մի վայրկյան չդադարող էներգափոխանակությունը հսկայական ազդեցություն է գործում նրա կեցության ամբողջ պրոցեսի վրա:

Այդ իսկ պատճառով չափազանց ԿԱՐԵՎՈՐ է հետևել սեփական ամեն բառին, ամեն զգացմունքին, հոգու ամեն պոռթկումին, որովհետև այդ ԱՄԵՆՆ է ստեղծում ոչ միայն հենց ձեզ, ձեր Երկիրը, Գալակտիկան, այլև, վերջիվերջո, ձեր Տիեզերքը:

Այժմ տեսնենք, թե ինչպես են անդրադառնում ձեր և ձեր Երկրի վրա նրա առաջին և երկրորդ մակարդակները. դա մարդկային ամենագարշելի, ամենաստոր ցանկությունների մի կուտակ է, մարդուն բնորոշ բոլոր արատների խտացումը, ամենաբացասական էներգիայի թանձրուկ:

Շնորհիվ անդրադարձման օրենքի, տեղի է ունենում այդ էներգիաների մշտական փոխանակություն, և խուսափել դրանից անկարելի է: Միակ բանը, որ մարդ կարող է անել այդ անդադրում բացասական հոսքը կանգնեցնելու համար՝ վերափոխել սեփական բացասական մտքերն ու զգացմունքները դրականի, արմատախիլ անել սեփական արատներն ու նսեմ ցանկությունները՝ փոխարինելով դրանք Աստվածային ձգտումներով, ճշմարիտ Միրով, այլ ոչ թե կենդանական բնազդներով: Ուրիշ ճանապարհ տրված չէ:

Եվ այդ ժամանակ, աստիճանաբար, ողջ Չարը, որ կուտակված է Երկրի նուրբ պլանում, կդադարի սնուցում ստանալ երկրային պլանից ու կլուծվի Լույսի և Միրո էներգիաներով, Երկիրն էլ, իր հերթին, կդադարի բացասական էներգիաներ ստանալ:

Դուք կասեք, թե դա երկար և բավական ուտոպիական պրոցես է: Բայց չէ՞ որ ամեն ինչ կախված է ձեզնից յուրաքանչյուրից: Իհարկե, բոլոր մարդիկ չեն կարող այդքան շուտ փոխվել, բայց եթե լուսավորյալ մարդկանց քանակը գերակշռի «չարթնացածներին», արդեն իսկ բավական կլինի, որ նժարը հակվի դեպի Լույսը, որը կչեզոքացնի ստորին շերտերում կուտակված բացասական էներգիան:

Երրորդ՝ այսպես ասած «չեզոք» մակարդակը, չնայած չի կրում իր մեջ նույնքան ահռելի բացասական էներգետիկական լիցք, որքան նախորդ երկու շերտերը, այդուհանդերձ բավական վատ ներգործություն ունի մոլորակի վրա, քանի որ սնուցում է նրա երկվությունը <дualность>:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Ի՞նչ է նշանակում դա: Բաժանման էներգիաները, որոնք հատուկ են երրորդ խտության մարդկանց՝ ինչպես ապրողներին, այնպես էլ ապամարմնավորված հոգիներին, շարունակում են իրենց ավերիչ գործը՝ մարդկանց մեջ ներդնելով այնպիսի հասկացություններ, ինչպես «յուրային-օտար», «լավ-վատ», «բարի-չար», «հարուստ-աղքատ» և այլն:

Եվ «երկվության» էներգիաների այդ փոխանակությունը հոգևոր աճի գլխավոր խոչընդոտն է մոլորակի բնակչության հսկայական մի շերտի համար, որը շարունակում է ապրել դարերով հաստատված կանոններով, օրենքներով ու ավանդույթներով:

Այդ արատավոր շրջանը խզելու համար մարդիկ ստիպված են անասելի ջանքեր գործադրել, դեմ գնալ հանրորեն ընդունված նորմերին, «լողալ հոսանքին հակառակ»՝ անսալով իրենց ներքին ձայնին, այլ ոչ թե նրան, ինչ դրսից է պարտադրվում:

Եվ միայն չորրորդ մակարդակի էներգիաներն են ստեղծարար սկզբունք կրում իրենց մեջ: Նրանք հենց այն թրթռոններն ունեն, որոնցից սկսվում է մարդու վերելքը դեպի իր ակունքները, երբ հոգին արթնանում ու հետզհետե վերհիշում է իր ծագումը՝ հավիտենական և աստվածային:

Այս էներգիաների փոխանակությունը օգնում է թե՛ կյանքից հեռացածներին, թե՛ ողջերին, որովհետև վսեմացնում է հոգիները: Ինչպե՞ս է դա տեղի ունենում:

Ով հեռացել և ճանաչել է կյանքը վարագույրից անդին, ում բացվել է ճշմարտությունն իր ողջ լայնությամբ և խորությամբ, սկսում է ինտուիտիվ կերպով հղել այդ էներգիաները, այդ իմացությունները Երկրի վրա մնացած մարդկանց, հատկապես իր մերձավորներին ու սիրելիներին, և դա օգնում է նրանց ճիշտ որոշումներ կայացնել, հարստացնում է հոգեպես և բերում գիտակցության նոր մակարդակի:

Նրանք էլ, իրենց հերթին, սկսում են Սեր հղել հեռացած մերձավորներին, տոգորելով նրանց Լույսով, և ոչ թե վշտով, որը ծանրացնում է ապամարմնավորված հոգիների կեցությունը Երկրի նուրբ պլանում, քանի որ իրենք հնարավորություն չունեն մխիթարելու Երկրի վրա մնացած հարազատներին ու սիրելիներին:

Հինգերորդ խտության էներգիաներն ունեն արդեն ազդեցության շատ ավելի մեծ դիապազոն, որովհետև ինչպես ապամարմնավորված, այնպես էլ ֆիզիկական մարմիններում կենդանի հոգիների գիտակցության մակարդակը թույլ է տալիս ներգործելու ավելի լայն զանգվածների վրա:

Սա արարման, Տիեզերքի և իր օրենքների առավել խորքային ճանաչման մակարդակն է: Եվ Երկրի նուրբ ու հոծ պլանների այս հոգիների էներգափոխանակությունը բերում է փոխադարձ հարստացման և թրթռանքի երկուստեք վերելքի:

Երկրի վրա ապրող այն մարդիկ, որոնք ունեն հինգերորդ խտության թրթռանք, Ծառայության են ելնում, այդպիսով նոր մակարդակի բարձրացնելով ոչ միայն իրենց, այլև բոլոր նրանց գիտակցությունը, ովքեր այդպիսի ներուժ ունեն:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Այս մարդկանց հաջողվում է անել առաջին քայլը, որը բերում է հաղթանակի՝ սեփական Էգոյի նկատմամբ, իրենց որպես Տիեզերքի մասնիկը գիտակցելու և հասկանալու սեփական պատասխանատվությունը աշխարհում կատարվող ամեն ինչի համար:

Վեցերորդ և յոթերորդ խտությունները յուրատեսակ «համալսարան» են այն հոգիների համար, որոնք հաջողությամբ անցնում են հինգերորդ խտության փորձով:

Այս աստիճանում նրանք կարող են աշխարհին ու Տիեզերքը տեսնել Աստվածամարդու աչքերով, զգալ Տիեզերքի բոլոր բաղադրիչների միասնությունն ու էներգետիկական փոխներթափանցումը, տեսնել բոլոր պատճառա-հետևանքային կապերը, հասկանալ Երկրի վրա ընթացող իրադարձությունների խորքային իմաստը:

Եվ եթե ֆիզիկական մարմիններում կենդանի մարդիկ աշխարհը փոխելու համար գիտակցական աշխատանք սկսեն այն ապամարմնավորված հոգիների հետ, որոնք Երկնքում ընդունել են Ծառայությունը՝ որպես օգնություն մարդկությանը, դա կարող է անհավատալի և արագ արդյունքների բերել Երկիրը նոր, բարձր թրթիռներով տոգորելու և մարդկանց գիտակցությունը փոխելու ուղղությամբ:

Այդ աշխատանքն արդեն սկսվել է, և ես տեսնում եմ, թե ինչպես է այն վսեմացնում մարդկային հոգիները վարագույրի թե՛ այս, թե՛ այն կողմում և ինչ անգնահատելի օգնություն է բերում Երկրին, ինչպես է նպաստում նրա առաջընթացին դեպի Հինգերորդ խտություն:

Հզոր հորձանքով Երկիրը ողողած վսեմագույն թրթռանքով էներգիաները օգնում են հոգևոր զարգացման բարձր մակարդակի հասած բազմաթիվ մարդկանց տեղեկատվություն ընդունել մաքուր ակունքից: Շատերի մոտ ի հայտ են գալիս պայծառատեսության, պայծառալսության <ясослышание>, Տիեզերքի Բարձրագույն Ուժերի հետ հեռազգացական <телепатический> կապի ունակություններ:

Ութերորդ խտությունը՝ Սրբերի և Համբարձյալ Վարպետների մակարդակը, հատկապես հիմա սկսել է բացառիկ կարևոր նշանակություն ստանալ, որովհետև Երկրի համար ճակատագրական այս ժամանակաշրջանում բազում հոգիներ են իջել այնտեղից:

Սակայն էներգափոխանակությունն այստեղ կատարվում է արդեն բոլորովին այլ մակարդակում, որը դժվար է բացատրել՝ ելնելով երկրային իրողություններից, քանի որ այս դեպքում սկսում է գործել սրբազան մի պրոցես, որը կոչված է օգնելու նման հոգիներին մինչև վերջ իրագործելու այն առաքելությունը, որի համար իրենք Երկիր են եկել:

Եվ այդ հոգիներին իրենց սևեռուն ուշադրության տակ են պահում բոլոր Բարձրագույն Ուժերը, որոնք պահպանում են նրանց, օգնում, առաջնորդում և մշտական կապ ունեն նրանց հետ:

Հենց նրանց միջոցով էլ մաքուր ակունքից հեռազգացական կապուղիներով <канал> տեղեկատվություն է հաղորդվում երրորդ խտության մարդկանց, որ հոգևոր զարգացման նոր մակարդակ դուրս բերեն վերջիններիս, որ պատմեն, թե ինչ է սպասում Երկրին և իր բնակիչներին և ինչ է հարկավոր անել նրա հետ միասին Հինգերորդ չափում համբարձվելու համար:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Դրա համար այժմ ասպարեզում են Տիեզերքի բոլոր Բարձրագույն Ուժերը:

Իններորդ խտության փոխհարաբերությունը Երկրի հետ այսպիսին է. Էությունները, որ բնակվում են այդ խտությունում, վերահսկում են թրթիռների ցրումը ոչ միայն նուրբ պլանում, այլև հենց Երկրի վրա:

Նրանց գործը գիտակցության նոր մակարդակ ելած մարդկանց փափուկ ու ներդաշնակ անցումն է նոր թրթիռների՝ առանց օրգանիզմին ու հոգեկան վիճակին վնաս հասցնելու:

Հենց նրանք են պահում ֆիզիկական մարմնի և նուրբ մարմինների հավասարակշռությունը, ապահովելով համաչափ թրթիռային հոսք, ինչը թույլ է տալիս ձեռք բերել թրթռանքի մեջ անգամ ապրել ու աշխատել երրորդ խտությունում՝ չզգալով այն ահռելի էներգետիկական գերբեռնվածությունը, որ պարզապես անխուսափելի կլիներ, եթե այդ պրոցեսին չմիջամտեին իններորդ խտության ձեռն անտեսանելի օգնականները:

Ահա և հասանք **տասներորդ խտությանը**, որտեղ իրենց «նիստերն» է գումարում Համագալակտիկական Խորհուրդը, որի նշանակությունը դժվար է գերազնահատել:

Այդ նրանց որոշումներն ու գործողություններն են բազմիցս փրկել ձեռք Երկիրը անխուսափելի կործանումից, այդ նրանք են հսկում Երկրի վրա կատարվող բոլոր իրադարձությունները, հետևելով դրանց վտանգավորության աստիճանին, որպեսզի ժամանակին կանխեն սպառնալիքը և թույլ չտան Երկրի համար աղետալի հետևանքներ:

Կարող եմ առանց չափազանցության ասել, որ միայն նրանց շնորհիվ է, որ ձեռք Երկիրը կենդանի է մնացել և հիմա ելնում է իր կեցության միանգամայն նոր մակարդակին:

Այդ նրանք՝ ձեռք պաշտպաններն ու փրկիչները, ձեռք հովանավորներն ու ապագա ուսուցիչներն են օգնելու ձեռք ընտելանալ նոր Երկրում՝ Հինգերորդ չափման կյանքում: Ու թեև իրենք վաղուց արդեն ապրում են ավելի բարձր խտություններում, իրենց Մեծ Անցման փորձը լավ են հիշում և հաճույքով կկիսեն ձեռք հետ:

Ներկայումս նրանցից շատերը կապ են հաստատում այն երկրացիների հետ, որոնք ունակ են հեռագրացորեն հաղորդակցվելու, և նրանց են փոխանցում խիստ կարևոր և տվյալ պահին անհրաժեշտ տեղեկատվություն, դրանով իսկ նախապատրաստելով մարդկանց գիտակցությունը նրան, որ իրենք Տիեզերքի միակ բանական էակները չեն, որ բազմաթիվ մոլորակներ կան բնակեցված և շատերն իրենց բանական եղբայրներն են՝ ոչ թշնամի, այլ բարեկամ, պատրաստ օգնության ձեռք մեկնելու և ուրախությամբ ու սիրով ընդունելու նրանց իրենց մեծ գալակտիկական ընտանիքի մեջ:

Հայր-Աստված, որ բնակվում է **Տասնմեկերորդ խտությունում**, ինչպես և ես՝ **տասներկուերորդ խտությունից**, փորձում ենք, այն մարդկանց միջոցով, որոնց թրթռանքը թույլ է տալիս մեզինց եկող տեղեկատվություն ընդունել, իրենց հոգևոր զարգացման առավելագույն մակարդակին բերել մարդկանց՝ թելադրելով իրադարձությունների ճշմարիտ էությունը բացահայտող ուղերձներ և ուղղորդելով նրանց գիտակցությունը անհրաժեշտ հունով:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Եվ մենք սերում ու Երկիր ենք հղում բարձրագույն թրթռանքով էներգիաներ, որոնք կոչված են փոխակերպելու ձեր ֆիզիկական մարմինները և առավելագույն մակարդակի բարձրացնելու ձեր գիտակցությունը, ինչը թույլ կտա ձեզ համբարձվել Երկրի հետ միասին և վերադառնալ ձեր Աստվածային ակունքներին:

Մենք նաև լսում ենք ձեր ամեն մի խնդրանքը, հոգու ամեն ճիշդ և միշտ օգնում ենք ձեզ, եթե տեսնում ենք, որ Հոգին պատրաստ է ընդունելու այդ օգնությունը և դա նպաստավոր կլինի նրա համար:

Սակայն շատ բարակ է հասկացողության սահմանը մարդկային գիտակցության բարձունքից, թե ինչը կլինի հոգուտ ձեզ, իսկ ինչը՝ ի վնաս, քանզի չեք կարող տեսնել տեղի ունեցողի ամբողջ պատկերը, և դրա համար էլ երբեմն թվում է, թե Աստված չի լսում ձեզ: Նա լսում է ձեզ, գավակներս, բայց ի տարբերություն ձեզ՝ նա ստույգ գիտի, թե ինչ է հարկավոր ձեզ կյանքի տվյալ պահին, ինչ դաս պիտի անցնեք, ինչ նոր բան իմանաք և ինչ հետևություն անեք:

Ուրեմն շնորհակալությամբ ընդունեք ձեր կյանքում կատարվող ամեն բան՝ թե՛ վատ և թե՛ լավ, քանզի այդ ամենը ձեր հոգու անգին փորձն է, որն օգնում է բարձրանալ ձեր կեցության նոր մակարդակին:

Ինչպես տեսնում եք, սիրելիներս, Երկրի նուրբ պլանից հսկայական օգնություն է գալիս ձեզ, և միայն դուք կարող եք որոշել՝ ինչպես տնօրինել այն՝ ընդունել թե մերժել, գնալ Համբարձման և ձեր Աստվածամարդ լինելը գիտակցելու ճանապարհով, թե ապրել իներցիայով՝ այնպես, ինչպես սովոր եք, ձեր կյանքում ոչինչ չփոխելով:

Ընտրությունը ձեզնից յուրաքանչյուրինն է, և ես լիահույս եմ, որ այն կլինի ճիշտ, կլինի հենց այնպիսին, ինչպիսին ձեր Աստվածային Հոգին է տեսնում:

Օրհնում եմ ձեզ դրա համար, գավակներ՝ րս, և անչափ սիրում:

Լուսին

Այսօր ես կշարունակեմ իմ պատմությունը Տիեզերքի կառուցվածքի մասին և այս անգամ ուզում եմ ավելի հանգամանորեն կանգ առնել ձեր մոլորակի և մյուս երկնային մարմինների փոխներգործության վրա:

Սկսենք Լուսնից, որը Երկրի արհեստական արբանյակն է:

Երկար ժամանակ ձեր գիտնականներն այն համարել են բնական արբանյակ, որովհետև չէին կարողանում որոշել ծագումը: Իրականում ես այն ստեղծել եմ Երկրի էլեկտրա-մագնիսական տատանումների մակարդակը հսկելու և անհրաժեշտության դեպքում կարգավորելու համար:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Այժմ ավելի մանրամասն կպատմեմ այդ մասին, որովհետև հասկանում եմ, թե որքան նոր ու անսովոր է այդ տեղեկությունը ձեզ համար: Ի՞նչ է իրենից ներկայացնում Լուսինը:

Այս մոլորակը գործնականորեն անբնակ է, քանի որ ունի զուտ օժանդակ նշանակություն: Ժամանակի ընթացքում, Երկրի հետ ունեցած մշտական ուժեղ փոխազդեցության արդյունքում, այն փոքր-ինչ փոխել է իր պարամետրերը՝ դառնալով ինչ-որ չափով Երկրի արտացոլանքը:

Դա նշանակում է, որ ոչ միայն Լուսինն է ազդում Երկրի վրա, այլ Երկիրը նույնպես տալիս է նրան իր էներգիան: Նման էներգափոխանակության արդյունքում ձևավորվել են լուսնային փուլերը, որոնք մարդիկ սկսել են կիրառել ըստ նշանակության:

Իհարկե, դա միանգամից չի եղել: Երկար ժամանակ Լուսինը մարդկանց համար եղել է հանելուկային և չարագուշակ մի մոլորակ, հատկապես այն պատճառով, որ միշտ կապվել է գիշերվա հետ, փոխել է իր գծերն ու չափերը:

Նախնադարյան մարդիկ անբացատրելի սարսափ են զգացել նրանից, բայց Երկրի վրա ավելի զարգացած քաղաքակրթությունների՝ Ատլանտների և Լեմուրացիների ի հայտ գալու հետ, երկնային այս լուսատուի ուսումնասիրությամբ սկսել են զբաղվել լավագույն մտածողները՝ քրմերն ու աստղաբանները:

Եվ հենց նրանք էլ մանրակրկիտ կերպով հետազոտել են լուսնային փուլերը, կազմել առաջին լուսնային օրացույցները:

Իսկ ինչո՞վ է բացատրվում Լուսնի այդքան ուժեղ ներգործությունը Երկրի և մարդու ֆիզիկական վիճակի վրա:

Սկսենք նրանից, որ Լուսինը սպունգի նման ներծծում է Երկրի արձակած ավելորդ էլեկտրա-մագնիսական տատանումները, այդ կերպ պահպանելով Երկրի և իր բնակիչների էներգետիկական հավասարակշռությունն ու ներդաշնակ վիճակը: Այդ պրոցեսը չափազանց բարդ է ձեր հասկացողության համար, այդ իսկ պատճառով սուսկ ամենաընդհանուր գծերով եմ այն ներկայացնում:

Լուսնային փուլերը, որ կազմում էին 21 օր, այլ բան չէին, քան Երկրի և Լուսնի վրա միաժամանակ տեղի ունեցող էլեկտրա-մագնիսական հուզումների հետևողական, ներդաշնակ փոխներգործություն: Նման համաժամանակությունը ենթադրում էր էներգետիկական հավասարակշռության պահպանում:

Այն, որ ժամանակի հետ Լուսնի փուլայնությունը փոխվել է, բացատրվում է նրանով, որ Երկրի և Լուսնի հեռավորությունը հետզհետե մեծացել է, հետևաբար տեսանելիորեն ձևափոխվել է Լուսնի դիրքը Երկրի նկատմամբ: Այդպես, լուսնային փուլը աստիճանաբար մեծացել և կազմել է զրեթե 30 օր:

Լիալուսինն ու Լուսնի ծնունդը երկու մոլորակների փոխազդեցության զագաթնակետն են: Այդ է պատճառը, որ շատերը խիստ ուժեղ են զգում դա իրենց ֆիզիկական վիճակի վրա:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Հինգերորդ չափում անցնելու հետ կփոխվեն նաև Լուսնի պարամետրերը, որի թրթիռները նույնպես կբարձրանան, քանի որ նա լիովին կախված է Երկրի թրթռանքից և էլեկտրա-մագնիսական տատանումներից:

Այլ խոսքով՝ Երկիրն ու Լուսինը միասնական օրգանիզմ են, որի մի մասի յուրաքանչյուր փոփոխություն անմիջապես անդրադառնում է մյուս մասի վրա:

Այն, ինչ պատրաստվում են հիմա ասել, անսպասելի կլինի ձեզ համար, սակայն խնդրում են ըմբռնումով ընդունել:

Շուտով Լուսինն այլևս այսքան կարևոր դեր չի խաղա ձեզ համար, որովհետև Երկիրը, լիովին փոխելով իր պարամետրերն ու մտնելով նոր իրականություն, Լուսնի կարիքն էլ չի ունենա:

Ես չեմ խորանա ամբողջ պրոցեսի նրբությունների մեջ, կասեմ միայն, որ Երկիրը Հինգերորդ խտության մեջ կանցնի ինքնակարգավորման, և իր էլեկտրա-մագնիսական ալիքների անդրադարձիչը՝ Լուսնի տեսքով, այլևս հարկավոր չի լինի իրեն:

Նա կունենա ուրիշ արբանյակ, որի մասին դեռ վաղ է խոսել, բայց որը ինչ-որ առումով կփոխարինի Լուսնին, սակայն որպես բոլորովին այլ բան:

Դա չի նշանակում, թե Լուսինը կդադարի գոյություն ունենալուց, այն կփոխի իր ուղեծիրը և կդառնա երրորդ խտության մեկ ուրիշ մոլորակի արհեստական արբանյակը, որը ներկայումս ստեղծվում է այն մարդկանց համար, որոնք չեն կարողանա համբարձվել Երկրի հետ միասին և որոնց հոգիները կծնվեն այդ նոր մոլորակի վրա, որպեսզի շարունակեն իրենց կենսափորձը երրորդ խտությունում:

Այդ ամենը կկատարվի աստիճանաբար, մինչև որ Երկիրը լրիվ տեղափոխվի Հինգերորդ չափում այն հոգիներով հանդերձ, որոնք ունակ կլինեն համբարձվելու իր հետ:

Սա հիբավի մեծագույն մի փորձարկում է, որն իր հետևից կբերի մոլորակային մասշտաբի փոփոխություններ ձեր Գալակտիկայի շրջանակում, և ես ուզում եմ, որ դուք իմանաք այդ մասին, զավակներս:

Արեգակ

Շարունակենք մեր զրույցը, և այսօր ես կպատմեմ ձեզ այն երկնային լուսատուի մասին, որն անբաժանելի է Երկրից, առանց որի Երկիրը պարզապես չի կարող գոյություն ունենալ:

Խոսքը, ինչպես արդեն կռահեցիք, Արեգակի մասին է: Ի՞նչ է այն ներկայացնում իրենից:

Այս երկնային լուսատուն մի բացառիկ մոլորակ է, որը «գոհաբերել է իրեն» հանուն մյուս մոլորակների: Ի սկզբանե Արեգակը ստեղծվել է որպես լույսի աղբյուր: Այն ձեր Գալակտիկայի

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

«Էլեկտրական լամպն» է՝ ամենաբարձր լարվածությամբ, որը պահվում է մշտական ռեժիմով և կյանքի աղբյուր է ոչ միայն ձեր, այլև շատ ուրիշ մոլորակների համար:

Թե ինչ է կատարվում այդ մոլորակի վրա, նկարագրել հնարավոր չէ. իսկական լավա՝ կենդանի, մոլեգին, ահռելի հզորությամբ էներգիա ճառագող, չէ՞ որ Երկիր հասնելով անգամ այն ի գործ է մոխրացնելու ամեն կենդանի բան, որ երկար ժամանակ կմնա իր ուղիղ ճառագայթների տակ:

Արեգակը գտնվում է ձեզնից այնպիսի հեռավորության վրա, որը թույլ է տալիս նրան բաշխել իր էներգիան հավասարակշռված կերպով: Եվ եթե նախկինում այդ հավասարակշռությունը մեծապես հարաբերական էր, քանի որ կային արևային էներգիայի գերավելցուկ ունեցող երկրներ և այնպիսիք, որտեղ այն անբավարար էր, ապա հիմա, երբ ձեր մոլորակը մուտք է գործում Հինգերորդ չափում, նրա կլիման կփոխվի այնպես, որ իր ողջ մակերևույթը, - ամեն մի հատվածը, - հետզհետե կսկսի ստանալ այնպիսի քանակությամբ արևային էներգիա, որն անհրաժեշտ է իրեն ներդաշնակ զարգացման համար:

Եվ դուք բոլորդ արդեն նկատել եք նման փոփոխություններ: Պետք չէ վախենալ դրանից: Դա լավ նշան է: Բոլոր բնական անոմալիաները, որ նկատվում են հիմա Երկրի վրա, կապված են հենց այդ վերակառուցման՝ արևային էներգիայի վերաբաշխման հետ:

Ցավոք, այն չի կարող իդեալական և հարթ ընթանալ այն պատճառով, որ այժմ անասելի շատ փոփոխություններ են միաժամանակ տեղի ունենում Երկիր մոլորակի վրա. փոխվում են նրա թրթիռները, փոխվում է մարդկանց գիտակցությունը, ընթանում է Երկրի և իր նուրբ մարմինների մաքրման հզորագույն պրոցես: Եվ արևային էներգիայի վերաբաշխումը մեկն է այդ պրոցեսներից:

Ինչպես ասվել է երկրորդ Արեգակի ի հայտ գալուն վերաբերող իմ ուղերձում, այժմյան Արեգակը կրում է իր մեջ արական՝ բավական ուժեղ և «ագրեսիվ» էներգիա, իսկ մեղմացնել և լիակատար ներդաշնակության բերել նրան կկարողանա իր երկրորդ կեսի՝ կանացի Արեգակի հայտնությունը, որը մեծագույն ներդրում կլինի Երկրի ամբողջ մակերևույթով մեկ արևային էներգիայի բնական և փափուկ վերաբաշխման պրոցեսում:

Եվ հենց երկրորդ Արեգակի հայտնվելն էլ կարագացնի կլիմայի փոփոխության պրոցեսը ձեր մոլորակում: Դա մի խտությունից մեկ այլ խտության Երկրի Մեծ Անցման բաղադրիչներից է: Եվ երբ նա վերջնականապես տեղափոխվի Հինգերորդ չափում և գույգ Արեգակներն էլ հայտնվեն իր հորիզոնում, Նոր Երկրի կլիման կլինի հենց այնպիսին, որ լիակատար ֆիզիկական և հոգեկան հարմարավետություն կապահովի ձեզ համար:

Իսկ դա, իր հերթին, թույլ կտա ձեզ, չմտածելով կենցաղային անհարմարությունների և խիստ պայմաններում գոյատևելու միջոցների մասին, անմնացորդ նվիրվել ձեր հոգուն սիրելի գործին, արարել և ստեղծագործել ի բարօրություն Նոր Երկրի բոլոր բնակիչների, վայելելով ներդաշնակություն և հանգիստ:

Սրանով էլ կավարտենք այսօր:

Այլմոլորակային քաղաքակրթություններ և գալակտիկաներ

Այսօր մենք կշարունակենք մեր զրույցը տիեզերքի կառուցվածքի վերաբերյալ: Այս անգամ ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել Երկիր մոլորակի և ձեր Գալակտիկայի մյուս մոլորակների փոխներգործության առանձնահատկությունների վրա:

Այն, որ նրանցից շատերը բնակեցված են, ճիշտ ինչպես ձեր Երկիրը, հուսով եմ՝ հաճելի անակնկալ կլինի ձեզ համար: Գրեթե բոլոր այդ այլմոլորակային քաղաքակրթությունները, հազվադեպ բացառությամբ, զարգացման ավելի բարձր մակարդակ ունեն՝ ի տարբերություն ձեզ: Դա բացատրվում է նրանով, որ Երկիրն ի հայտ է եկել շատ ավելի ուշ, քան նրանց մոլորակները, և նրանք, ի տարբերություն ձեզ, էվոլյուցիոն զարգացման շատ ավելի երկար ճանապարհ են անցել:

Եվ ահա հիմա, երբ ձեր հերթն է եկել նոր մակարդակ տեղափոխվելու, և ձեր Երկիրը նշանակալից չափով առաջադիմել է այդ ուղղությամբ, նրանք, որպես ձեր առավել փորձառու բանական եղբայրներ, պատրաստ են դառնալ ձեր ուսուցիչներն ու դաստիարակները՝ Տիեզերքի մյուս Լուսավոր Ուժերի հետ հավասար:

Նրանցից շատերի մասին դուք արդեն գիտեք, որովհետև տարիներ ի վեր իրենց ուղերձներն են թելադրում այն մարդկանց, որոնց հեռագրացական կապուղին < канал > բաց է:

Խոսքը Պլեյադներ համաստեղության, Անդրոմեդայի համաստեղության, Սիրիուս և Արկտուր մոլորակների բնակիչների մասին է: Այս մոլորակների ներկայացուցիչները Համագալակտիկական Խորհրդի կազմում են և մասնակցում են գործողությունների համատեղ պլանի մշակմանը, երբ ձեր մոլորակին սպառնացող վտանգ է լինում:

Սակայն, բացի ձեր բարեկամներից և հովանավորներից, կան նաև այլ մոլորակներ, որոնք զարգացման այնպիսի փուլում են, երբ իրենց տեխնիկական սարքերը հասել են շատ բարձր մակարդակի, բայց հոգևոր զարգացումը թույլ չի տալիս իրենց պատշաճ բարձունքի ելնել:

Ձեզ հայտնի մոլորակներից այդ կարգին է դասվում Ալֆա Ցենտավրա մոլորակը: Այս մոլորակի բնակիչները Երկրին վերաբերվում են որպես յուրատեսակ փորձադաշտի, և հենց նրանք են հաճախ առևանգում մարդկանց իրենց բժշկական փորձերի համար: Նրանք չեն կարող առանձնապես վնասել Երկրին և չունեն նման նպատակ, նույնիսկ մարդկանց առևանգումը որպես անմեղ մի զվարճանք են դիտում, առավել ևս, որ մեծ մասամբ վերադարձնում են նրանց ողջ ու անվնաս, շատ դեպքերում էլ, հակառակը՝ բուժելով ծանր հիվանդություններից:

Ինչու՞ եմ պատմում այս ամենը ձեզ, գալակներս: Որովհետև մոտենում է ժամանակը, երբ այլմոլորակայինների մասին տեղեկատվությունը կհայտնվի ձեր զանգվածային լրատվության միջոցներում, և դուք պետք է իմանաք, որ այլմոլորակային քաղաքակրթությունների մեծ մասը բարեկամ է ձեզ, այլ ոչ թշնամի, և բոլորից քիչ հենց նրանք կուզեն, որ իրենց դիմավորեք

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

խուճապով ու վախով, ինչպես եղել է բազմիցս, երբ երկնքում հայտնվել են նրանց թռչող օբյեկտները:

Իսկ թե ինչու են այսքան ժամանակ թաքցրել ձեզնից ճշմարտությունը նրանք, ովքեր վաղուց գիտեին ձեր բանական եղբայրների գոյության մասին, բացատրվում է նրանով, որ պաշտոնական դեմքերին բնավ ձեռնտու չէր պատմել մարդկանց, որ նրանք մենակ չեն Տիեզերքում, որ դուք բազում օգնականներ ու բարեկամներ ունեք, որոնք պատրաստ են անել իրենց ուժերից եկածը՝ հոգևոր ստրկությունից ձեզ ազատելու և զարգացման նոր մակարդակի բարձրացնելու համար:

Սակայն հիմա, երբ ձեր Երկիրն անշեղորեն գնում է դեպի Հինգերորդ չափում և հետդարձի ճանապարհ այլևս չկա, հարկադրված կլինեն բացելու ճշմարտությունը: Բայց դա կանեն բոլորովին այլ մարդիկ, որոնք շուտով կգան իշխանության, որոնք կկարևորեն արդեն ժողովրդի՝ այլ ոչ սեփական շահերը:

Դուք կանգնած եք մեծագույն փոփոխությունների շեմին, և ես ուզում եմ, որ ընդունեք դրանք բաց սրտով, առանց վախի և խուճապի, լիակատար վստահությամբ և սիրով:

Հիշե՛ք, սիրելիներս, որ ձեզ համար դժվարին այս անցումային փուլում ես միշտ ձեզ հետ եմ և ինձ հետ՝ Տիեզերքի բոլոր Բարձրագույն Ուժերը:

Մնացեք հանգիստ, և ինչ էլ որ ձեր շուրջը կատարվի, թող ձեր կյանքի գլխավոր ուղեկիցը լինի Լույսը և Սերը:

Օրհնում եմ ձեզ, զավակներ՝ ռս, և անչափ սիրում:

Զուգահեռ աշխարհներ

Ազարտա

Այսօր ես կշարունակեմ պատմել, թե ովքեր են բնակվում ձեր Գալակտիկայում՝ բացի այն այլմոլորակային քաղաքակրթություններից, որոնց մասին իմ նախորդ ուղերձում խոսեցի:

Դուք պետք է պատրաստ լինեք նրան, որ լույս ուրիշ մոլորակների բնակիչները չեն, որ կհայտնվեն շուտով ձեր հորիզոնում: Նրանցից բացի կան նաև զուգահեռ աշխարհների ձեր հարևանները, որոնք բառիս բուն իմաստով «պատի հետևում» են, սակայն, ի տարբերություն նրանց, դուք իրենց չեք տեսնում, իսկ եթե ինչ-որ մեկն ընկնում է նրանց աշխարհը, ապա միայն ակամա և անգիտակցաբար:

Բայց այդ ի՞նչ աշխարհներ են, և ովքե՞ր են բնակվում այնտեղ:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Ձեզնից շատերն արդեն լսել են Ագարտայի մասին՝ այդ խորհրդավոր ստորգետնյա աշխարհի: Իր կառուցվածքով այն առավելապես նման է ձերին, այն տարբերությամբ, որ գտնվում է երկրային թաղանթի մյուս կողմում:

Իրականում, սակայն, դա ստորգետնյա աշխարհ չէ, այլ՝ հինգերորդ խտության աշխարհ, որն արդեն վաղուց ի վեր գոյություն ունի ձեզ գուցա հեռ տարածքում: Այդ աշխարհում բնակվում են Երկրի վրա երբևէ ապրած բոլոր ռասաների ներկայացուցիչները: Դա մի յուրօրինակ Աստվածային «պահասենյակ» է:

Ինչի՞ համար է ստեղծվել: Եթե շատ պարզ ասենք, այն Երկինքն է՝ շուտ տված, այսինքն ոչ մի դեպքում դժոխքը չէ, ինչպես սխալմամբ կարծում են ոմանք, այլ մի մասնավոր նուրբ աշխարհ Երկրի մյուս կողմում, ուր ընկնում են ընտրյալ հոգիները որոշակի նպատակների համար: Նրանք «արխիվարիուսներն» են երկրային այն քաղաքակրթությունների, որոնք խոր հետք են թողել մարդկության պատմության մեջ, Երկիր մոլորակի յուրատեսակ «ոսկե պահոցն» են:

Ագարտան կարելի է համեմատել Երկրի հետ այն առումով, որ այնտեղ, ինչպես և Երկրի վրա, ապրում են մեծ քանակությամբ ռասաներ և ժողովուրդներ, միայն թե նրանց գիտակցությունը շատ ավելի բարձր՝ հինգերորդ խտության մակարդակ ունի:

Ագարտայում կգտնեք Ատլանտների, Լեմուրացիների, Հիպերբորեացիների, «Орте́й»ների և շատ ուրիշ քաղաքակրթությունների ներկայացուցիչների, որոնց մասին դուք երբևէ չեք լսել, բայց նրանք գոյություն են ունեցել երկրի վրա:

Նրանց կյանքը կառուցված է այնպես, որ ազատ չեն տեղափոխվելու Գալակտիկայով մեկ, ինչպես այլմոլորակային քաղաքակրթությունները, թեև իրենք էլ ունեն թոշող սարքեր: Նրանց խնդիրն է հետևել Երկրի ֆիզիկական թաղանթին և վերահսկել մարդկանց վարքը: Դա կենսականորեն կարևոր է նրանց համար, քանի որ ապրում են ձեր անմիջական հարևանությամբ:

Դուք կարող եք տեսնել նրանց թոշող սարքերը, որոնք հայտնվում են ասես գետնի տակից: Ձեր մոլորակում բազմաթիվ մուտքեր կան Ագարտա տանող, դրանցից մի քանիսը նույնիսկ հայտնի են մարդկանց, թեև այդ տեղեկությունները աշխարհի ուժեղները գերադասում են թաքուն պահել:

Ինչպե՞ս կարող է դրսևորվել ձեր համագործակցությունը Ագարտայի բնակիչների հետ: Քանի որ նրանք էլ ձեզ նման շահագրգռված են, որ Երկիրն իր զարգացման նոր շրջափուլի մեջ մտնի նվազագույն կորուստներով,- իրենց համար անվնաս և առանց մարդկային զոհերի,- նրանք կարող են օժանդակել ձեր աշխատանքին:

Դուք կարող եք կանչել նրանց ձեր այն մեղիտացիաներին, որոնց նպատակն է մաքրել և Սիրո էներգիայով տոգորել Երկիրը: Նրանք հաճույքով կարձագանքեն ձեր խնդրանքին, և դուք կզգաք նրանց հզոր և միևնույն ժամանակ քնքուշ էներգիան:

Ապագայում, երբ Երկիրը վերջնականապես տեղափոխվի Հինգերորդ չափում, Երկրի երես կլենեն հինգերորդ խտության Լույսի Քաղաքներ, այդ թվում՝ Ագարտայի քաղաքները, և նրանց

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

բնակիչները հնարավորություն կունենան օգնելու մարդկանց՝ հարմարվելու իրենց համար նոր այդ աշխարհում:

Ձեր հարևաններից է նաև այն քաղաքակրթությունը, որն իրեն պայմանականորեն անվանում է «յոթ մոլորակների ներկայացուցիչներ», նրանց ուղերձները դուք կարդացել եք արդեն: «Յոթ մոլորակներ» անվան տակ ենթադրվում են նրանց հսկայական նավերը, որոնք իսկապես նման են ոչ մեծ մոլորակների, և այդ նավերից յուրաքանչյուրի վրա բնակվում են տարբեր, իրարից բավական զանազանվող մարդակերպ էակներ:

Նրանք էլ են ձեր բարեկամները՝ զուգահեռ աշխարհում ապրող, և նրանց թոչոչ սարքերը շատերն են տեսնում: Նրանք էլ Ազարտայի բնակիչների պես խիստ անհանգստացած են Երկրի իրադարձություններով և աչալուրջ հետևում են դրանց:

Այս քաղաքակրթությունը տիրապետում է բացառիկ տեխնոլոգիաների և անսահմանափակ էներգիայի աղբյուրների, որոնք սիրով կկիսի ձեզ հետ, երբ Երկրի վրա ստեղծվեն համապատասխան պայմաններ և մարդկանց գիտակցությունը պատրաստ լինի ընդունելու նրանց ընծան:

Այսօր կբավարարվենք այսքանով:

Երազների աշխարհներ

Այսօր ուզում եմ շարունակել իմ պատմությունը ձեր Երկրի անմիջական հարևանությամբ գոյող զուգահեռ աշխարհների մասին:

Այդ աշխարհները հենց ձեր կողքին են, բառացիորեն հատվում են ձեր աշխարհի հետ, հոսում նրա մեջ: Եվ այդ փոխներթափանցումը ձեզնից շատերը քնի մեջ են զգում: Ձեր երազներում դուք, ինքներդ էլ չգիտակցելով, ազատ շրջագայում եք բոլոր այդ աշխարհներով: Իսկ այն երազները, որ երբեմն ձեզ հաջողվում է մտապահել, հենց այդ շրջագայությունների արձագանքն են:

Աշխարհներն այդ շատ տարբեր են, ըստ իրենց թրթռանքի՝ երկրորդից մինչև հինգերորդ խտության:

Եվ այդ աշխարհների մասին մարդկությանը գրեթե ոչինչ հայտնի չէ, քանի որ անհնար է դրանք տեսնել, ուսումնասիրել, շոշափել: Ձեզ համար այդ աշխարհները պատրանքի պես են: Հիմա ես ավելի հանգամանորեն կպատմեմ նրանց մասին:

Այդ աշխարհները ձևավորվել են մարդու կենսագործունեության հետևանքով՝ որպես դրա հայելային արտացոլանք: Նրանք տոգորված են մարդկային մտքերով և զգացմունքներով: Կամ,

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

այլ կերպ ասած, դա էներգիայի այն կրիտիկական զանգվածն է, որը «մարսել» արդեն անկարող է Երկրի նուրբ պլանը, և այդ էներգիայի մի մասը տեղափոխվել է գուգահեռ աշխարհներ:

Իրենց թրթռանքից կախված՝ այդ էներգիաներն ընկնում են այս կամ այն աշխարհ: Դրա համար էլ երբեմն մղձավանջներ եք տեսնում երազում, երբեմն ընկնում եք հիասքանչ աշխարհներ, երբեմն էլ մթության մեջ դեգերում: Եվ ձեր զգացումներից ելնելով՝ կարող եք հեշտությամբ որոշել, թե ինչ աշխարհում եք երազում եղել:

Իսկ ո՞վ է ապրում այդ աշխարհներում: Այնտեղ բնակվում եք դուք ինքներդ՝ քնած ժամանակ: Այնտեղ էլ, ինչպես բովանդակ Տիեզերքում, «նմանը ձգում է նմանին», նշանակում է՝ քնի մեջ հանդիպում եք թրթռանքով ձեզ նման մարդկանց և ընկնում հենց այն աշխարհները, որոնք համապատասխանում են ձեր հոգու վիճակին:

Ահա թե ինչու է կարևոր լինել ներդաշնակ և խաղաղ վիճակում, այդ ժամանակ քնի մեջ անգամ չեք «ընկնի» ցածր թրթիռների մեջ, այլ կճամփորդեք հինգերորդ խտության չքնաղ աշխարհում:

Այդ աշխարհները խորհրդանշորեն կարելի է անվանել ձեր երազների աշխարհներ: Դա միևնույն էներգափոխանակությունն է, միայն ոչ թե ձեր և Երկրի նուրբ պլանի, այլ ձեր և գուգահեռ աշխարհների միջև, որն ունի իր օգուտն ու գործնական նշանակությունը, քանի որ ձեր երազներն արտացոլում են ձեր հոգեկան դրությունը և հաճախ հղում են հուշումներ, որոնք մարդիկ հաջողությամբ վերծանում են արդեն:

Դուք կարող եք սովորել կառավարել ձեր մտքերը և, ըստ ցանկության, ընկնել այս կամ այն աշխարհ, և անշուշտ հարկավոր է ձգտել քնած ժամանակ ճամփորդել չորրորդ և հինգերորդ խտության աշխարհներում, որոնք կտոգորեն ձեզ բարձրաթրթիռ էներգիաներով և նույնիսկ քնի մեջ կհանեն հոգևոր ավելի բարձր մակարդակի:

Ամեն անգամ քնելուց առաջ խնդրեք անցկացնել գիշերը Հինգերորդ չափման մեջ: Եվ եթե արդեն սովորել եք ներդաշնակ վիճակ պահպանել օրվա ընթացքում, ձեր գիշերը կդառնա օրվա հրաշալի շարունակությունը:

Իսկ ի՞նչ կա ավելի գեղեցիկ, քան այն, որ ձեր հոգին օրը քսանչորս ժամ լինի բարձր թրթիռների աշխարհում՝ Լույսի և Միրո աշխարհում:

Օրհնում եմ ձեզ դրա համար, զավակներս, և անչափ սիրում:

Ջրի պահապանների աշխարհը

Եկեք շարունակենք մեր զրույցը այլ աշխարհների մասին, որոնք գոյում են ձեր կողքին:

Այդ աշխարհները պայմանականորեն կոչվում են զուգահեռ աշխարհներ, թեև երկրաչափության տեսանկյունից գետեղված են ավելի շուտ ուրիշ հարթության աշխարհներում: Նրանք ձեզնից զատված են չափազանց բարձրաթրթիռ էներգիայից բաղկացած մի տեսակ բարդ երկրաչափական կառուցվածքով, այդ իսկ պատճառով էլ երրորդ խտության մարդը գործնականորեն չի կարող «թափանցել» այնտեղ:

Բացառություն է կազմում երազների աշխարհը, որի մասին խոսվել է նախորդ ուղերձում:

Բոլոր մյուս աշխարհներն այնքան շատ են տարբերվում Երկիր մոլորակից, որ ձեր գիտակցությունը դեռևս ի վիճակի չէ ըմբռնելու, թե ինչ է տեղի ունենում այնտեղ:

Այդուհանդերձ ես կպատմեմ ձեզ նրանցից մի քանիսի մասին, քանի որ արդեն շուտով ապրելու եք Հինգերորդ չափման մեջ, որտեղից հնարավոր կլինի ներթափանցել այդ խորհրդավոր աշխարհները:

Նրանց մեջ ամենազարգացածը ջրի պահապանների աշխարհն է: Նրա բնակիչները նման են հսկայական մոդեսների, որոնք, սակայն, ոչ մի ընդհանրություն չունեն սողունակերպների <рептилии> քաղաքակրթության հետ: Նրանց մարմինները փայլում են ոսկեկանաչ լույսով, իսկ աչքերը Լույս ու Մեր են ճառագում: Սա վեցերորդ խտության քաղաքակրթություն է, այդ պատճառով էլ նրանց մարմիններն այնքան նոսր են, որ ցանկության դեպքում նրանք կարող են փոխել իրենց կերպարանքը: Նրանք չեն քայլում, այլ կարծես պարում են՝ թեթևորեն սահելով մակերևույթով:

Նրանց աշխարհը շատ տարբեր է ձերից: Այն կարելի է անվանել «ջրի արքայություն», որովհետև հիմնականում կազմված է գետերից և լճերից: Այդ աշխարհի բնակիչներն իրենց հավասարապես ազատ են զգում և՛ ջրում, և՛ ցամաքում: Նրանք բառիս բուն իմաստով քայլում են ջրի վրայով:

Իսկ այդ քաղաքակրթության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ոչ մի «կառուցվածք» չունի՝ ո՛չ սոցիալական, ո՛չ պետական, ո՛չ էլ որևէ այլ:

Այնտեղ ամեն էակ ինքն է իր պետությունը, այնքան որ յուրաքանչյուր ոք ինքնաբավ է և համակողմանիորեն զարգացած, և յուրաքանչյուրն իրագործում է իր ուրույն նախասահմանումը:

Այս աշխարհը պայմանականորեն կարելի է անվանել վեցերորդ խտության մտավոր-հոգևոր աշխարհ: Նրա գոյության հիմնական իմաստն է՝ իր միջով անցկացնել ու մաքրել ջրի էներգիան, որը գալիս է ինչպես Երկրից, այնպես էլ մյուս զուգահեռ աշխարհներից:

Այն մի յուրատեսակ գտիչ է, որի միջով անցնելուց հետո ջրի էներգիան՝ մաքրված և Լույսի ու Միքո էներգիայով հագեցած, վերադառնում է այն աշխարհները, որտեղից եկել է:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Հասկանում եմ, որ ձեզ համար դժվար է ըմբռնել դա, բայց ես կուզեի, որ դուք իմանաք, թե որքան բարդ է աշխարհի կառուցվածքը և որ կան ամբողջ քաղաքակրթություններ, որոնք իրենց նվիրաբերել են ուրիշներին՝ մաքրելով նվազ զարգացած քաղաքակրթություններից եկող էներգիաները:

Ես ուզում եմ նաև, որ դուք զգաք ձեր կապը ձեր բանական «եղբայրների» հետ և հասկանաք, թե ինչ աշխատանք են տանում նրանք ձեզ համար՝ մաքրելով գետերը, լճերն ու ծովերը, որոնք այնպես անմտորեն վերացնում ու աղտոտում էք դուք:

Հավատացեք, առանց այդ անձնվեր աշխատանքի Երկրի վրա վաղուց ջրային «աղետ» կլիներ:

Հիշե՛ք նրանց մասին և հարգե՛ք նրանց գործը, սիրելիներ՛ս:

Մարդկային ռասայի ծագումը

Այսօր ես կպատմեմ ձեր պատմության, նախնիների, ավելի ճիշտ՝ նախահայրերի մասին, որպեսզի վերադառնալով ձեր ակունքներին, կարողանաք ավելի լավ հասկանալ, թե ինչ է այսօր կատարվում ձեզ հետ:

Սկսենք հեռվից: Առաջին մարդիկ Երկրի վրա հայտնվեցին համաշխարհային ջրհեղեղից շատ չանցած: Դրանից առաջ այստեղ ապրում էին բարձրագույն ռասաներ, որոնց համար Երկիրը մի յուրահատուկ թատերաբեմ էր, ուր վիթխարի ներկայացումներ էին բեմադրում՝ գործադրելով իրենց գերունակությունները:

Որտեղի՞ց է սկիզբ առնում մարդը՝ իր այն տեսքով, որ ունի ներկայումս: Անշուշտ, նա չի առաջացել ո՛չ կապկից, ո՛չ էլ բարձրագույն ռասաներից: Դուք, սիրելիներս, աշխարհ եք եկել տարբեր այլմոլորակային քաղաքակրթությունների ԴՆԹ-ների խաչասերման արդյունքում:

Որպես հիմք վերցվել է Պլեյսթոսենի ԴՆԹ, և հենց Պլեյսթոսենիին էլ հանձնարարվել է մարդկային մարմնի ստեղծումը: Բայց իրենց գեներն են ներդրել նաև հոգևոր բարձր զարգացման հասած ուրիշ այլմոլորակային ռասաներ:

Ինչու՞ է այդպես եղել: Բանն այն է, որ Երկիր մոլորակը համեղ պատառ էր շատ ու շատ քաղաքակրթությունների համար: Այն իդեալական էր ապրելու կամար: Եվ կամաց-կամաց այստեղ են եկել տարբեր այլմոլորակային քաղաքակրթություններ, և ամուսնություններից, որ կնքում էին իրար մեջ, սկսել են ծնվել մարդիկ:

Այլ կերպ ասած, դուք բոլորդ կրում եք ձեր մեջ այս կամ այն այլմոլորակային ռասայի գեները: Արտաքուստ դուք առավելապես նման եք Աստղամեղացիներին, թեև նրանք շատ ավելի բարձրահասակ են: Ինչպե՞ս է պատահել, որ դուք ընդունել եք հենց այն կերպարանքը, որը

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

հաստուկ է մարդուն հազարամյակներ ի վեր, և ինչու՞ այդ կերպարանքը գործնականորեն չի փոխվում:

Այն առաջ է եկել խիստ մանրակրկիտ գենային ընտրության արդյունքում, որ արել են մյուս մոլորակների լավագույն գիտնականներն ու կենսաբանները: Նրանք խորապես շահագրգռված էին, որ մարդը դառնա Աստվածային արարչության գազաթը: Եվ նա դարձավ այդպիսին:

Կար ժամանակ, երբ դուք միմյանց հետ հաղորդակցվում էիք հեռագրացորեն: Ձեր ինտուիցիան այնքան զարգացած էր, որ առանց նվագագույն դժվարության ամենաճիշտ որոշումներն էիք կայացնում ցանկացած իրավիճակում: Դուք ներդաշնակ էիք ինքներդ ձեզ և բնության հետ:

Դա մարդկության Ոսկեդարն էր, երբ Երկրի վրա տիրում էր Սերը և մարդիկ չէին ճանաչում թշնամանք ու ագրեսիվություն: Իսկ ի՞նչ պատահեց: Այդ ի՞նչը փոխեց ձեր զարգացման ընթացքը:

Պատահեց այն, որ մարդիկ կորցրեցին զգոնությունը. չափից ավելի լավ ու խաղաղ էր նրանց կյանքը: Եվ դրանից չվարանեցին օգտվել Դրակոնյանների: Սողունակերպների այս ռասան, որի հոգևոր զարգացման մակարդակը շատ ավելի ցածր է մարդու համեմատությամբ, օգտվելով մարդկանց դյուրահավատությունից և ագրեսիվության խսկառ բացակայությունից, սկսեց դանդաղ, բայց համառորեն մարդկային հասարակության մեջ ներդնել իր բաժանողական ծրագրերը, որպեսզի աստիճանաբար իրեն ենթարկի նրանց գիտակցությունը և կառավարի սեփական նպատակներով:

Կային և ուրիշ տեխնածին քաղաքակրթություններ՝ զարգացման նույնպիսի ցածր մակարդակ ունեցող, որոնք առևանգում էին մարդկանց և իրենց հիբրիդներն աճեցնում Երկիրը գաղութացնելու նպատակով:

Թե ինչի հանգեցրեց դա, դուք գիտեք արդեն: Ձեր ամբողջ արյունալի պատմությունը, ձեր բոլոր դժբախտություններն ու տառապանքները հետևանք են ձեր կյանքի մեջ այդ գաղտնի էակների միջամտության, որոնք մարդկության ստրկացման իրենց պլանների իրագործման հետ ավելի մեծ հոգևոր դեգրադացման ենթարկվեցին, քանի որ նրանց ախորժակը բացվել էր և ավելի ու ավելի մեծ իշխանություն էին տենչում:

Երկրի եթերային պլանում բնակվող Դրակոնյանների ռասան ներկայումս արտաքսվել է Լուսի Ուժերի կողմից, սակայն մնացել են նրա ստեղծած բիոլոգիական հիբրիդները, որոնք ծրագրավորված են նվաճելու և ստրկացնելու մարդկությանը, որոնք ներդրվել են իշխանության բոլոր կառույցների մեջ և լիովին վերահսկում են Երկրի համաշխարհային կառավարությանը: Ու թեև նրանք գրկվել են իրենց ստեղծողների աջակցությունից, այդուհանդերձ շարունակում են հստակ իրագործել իրենց մեջ ներդրված ծրագրերը:

Այն, ինչ կատարվում է հիմա Երկրի վրա, յուրահաստուկ ապոկալիպսիս է, որովհետև նրանց տեխնոլոգիաները հասել են այնպիսի բարձր մակարդակի, որ կարող են կործանել մոլորակը և ոչնչացնել նրա վրա եղած ամեն կենդանի բան:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Շրջանը լրացել է: Եվ հիմա ձեր Երկրի փրկության համար մի ելք է մնացել՝ վերագտնել կորսված Աստվածայնությունը, որը կլցնի Երկիրը Սիրով և այնպիսի բարձրաթրթիռ էներգիաներով, որոնք ամբողջովին կչեզոքացնեն և իրենց մեջ կլուծեն չարության և ագրեսիվության էներգիաները՝ լիովին ազատագրելով մարդկությանը Դրակոնյանների իշխանությունից:

Եվ ահա, հենց այդ նպատակով էլ որոշվել է անցկացնել աննախադեպ մի փորձարկում՝ ձեր մոլորակի և իր բնակիչների՝ իրենց ֆիզիկական մարմիններով հանդերձ, տեղափոխությունը Հինգերորդ չափում, որը կապաստանի բոլոր այն վսեմ հոգիներին, որոնք կկարողանան վերհիշել իրենց Աստվածային ծագումը:

Այդ գործին են հիմա անմնացորդ նվիրված Հրեշտակների, Հրեշտակապետերի, Համբարձյալ Վարպետների, ձեր Գալակտիկական եղբայրների՝ ձեր բոլոր Երկնային հովանավորների ուժերը, որոնք Երկրի վրա վերջին վճռորոշ գոտեմարտին են ելել Խավարի Ուժերի դեմ:

Բազմաթիվ մարդկային հոգիներ զարթոնք են ապրում, և օրըստօրե ստվարանում են նրանց շարքերը: Արդեն հեռու չէ այն օրը, երբ կմիավորվի ձեր ողջ Գալակտիկական ընտանիքը, և դա կլինի հզորագույն մի ուժ, որին չեն դիմակայի Դրակոնյանները, և վերջապես կտապալվի նրանց իշխանությունը, որը փոխել է մարդկության պատմության ընթացքը՝ տանելով բոլորովին այլ սցենարով:

Մի քիչ էլ համբերեք, զավակներս: Հավատացեք՝ հետդարձ այլևս չկա: Խնդիրը միայն այն է, թե որքան մարդու կհաջողվի փրկել և ով է ձեզնից պատրաստ համբարձվելու ձեր մոլորակի հետ:

Մարդկությունը վերադառնում է իր Ոսկեդարը և արդեն՝ ընդմիջտ:

Մարդկային ռասայի ծագումը (շարունակություն)

Մի՛ կրկնեք անցյալի սխալները

Ես ուզում եմ շարունակել մարդու ծագմանը վերաբերող իմ նախորդ ուղերձը և ավելի մանրամասն պատմել ձեզ, թե ինչու հոգևոր զարգացման ձեզնից շատ ավելի ցածր մակարդակ ունեցող մի քաղաքակրթության հաջողվեց ազդել ձեր զարգացման ընթացքի վրա: Հուսով եմ, դա կօգնի ձեզ չկրկնել անցյալի սխալները:

Եվ այսպես, վերադառնանք այն Ոսկեդարը, երբ դուք իսկապես երջանիկ էիք ու անհոգ: Դա հինգերորդ խտության աշխարհ էր: Հենց այնտեղից էք դուք ելել և այնտեղ էլ վերադառնում եք:

Այն ժամանակվա Երկիրը նախատիպն էր Մալդենայի՝ ապագա Երկրի, և ձեր մոլորակն արդեն նոր իրականություն տեղափոխվելու շեմին է:

Այն ժամանակներում Երկրի կլիման շատ մեղմ էր, համասեռ ու քնքուշ: Հողը պատված էր կանաչով: Ծովերը, գետերն ու լճերը նախաստեղծ մաքրություն ունեին:

Մարդիկ ապրում էին ոչ մեծ համայնքներով, որոնք ձևավորվում էին ըստ հետաքրքրությունների և հոգևոր հարազատության: Ընտանիքները նույնպես կազմվում էին հոգևոր միասնության հիման վրա՝ միավորելով տղամարդուն և կնոջը:

Տարածությունն ու ժամանակը շատ հարաբերական հասկացություններ էին, որովհետև հինգերորդ չափման իրողություններում ժամանակը գծային բնույթ չուներ, իսկ տարածությունները հաղթահարվում էին մտքի ուժով:

Մարդիկ այն ժամանակ փաստորեն ո՛չ ծերանում էին, ո՛չ էլ հիվանդանում, որովհետև իրենց կյանքը կառուցում էին Տիեզերական օրենքներից ելնելով, և ողջ արտաքինը անդրադարձնում էր նրանց Աստվածային էությունը:

Իսկ ինչպե՞ս պատահեց, որ բավական կարճ ժամանակահատվածում դուք կարողացաք թանձրանալ մինչև երրորդ խտություն՝ հասնել ֆիզիկական և հոգևոր այսպիսի անկման:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Դրակոնյանների քաղաքակրթությունը քիչ առ քիչ սկսեց ձեր մեջ սերմանել և զարգացնել սեփականության գգացումը: Հենց դա դարձավ այն մեկնակետը, այն «փորձիչ-օձը», որից հետագայում աճեցին ազահության և իշխանության նման «հրեշները»:

Այդ նենգ քաղաքակրթությունն արդեն այն ժամանակ տիրապետում էր պսիխոտրոնային զենքին, որը հնարավորություն տվեց մարդկանց գիտակցության մեջ ներդնել իրենց հարկավոր ծրագրերը, իսկ հետագայում նաև իրենց գեները:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Միամիտ մարդիկ ենթադրել անգամ չէին կարող, թե ինչ վտանգ է սպառնում իրենց: Չէին հասկանում, թե ինչու է Երկրի վրա տիրող Միրո մթնոլորտը փոխակերպվում նախանձի, չարության և ագրեսիվության մթնոլորտի:

Բավական երկար դիմակայեցին նրանք Դրակոնյանների հարձակմանը՝ օգտվելով իրենց հիմնական զենքից՝ Միրուց, սակայն կասկածի սերմը, որը ցանվել էր չարամիտ ձեռքով, սկսեց ծիլեր տալ:

Եվ այդպես, ընդամենը մի քանի հարյուրամյակում Աստվածամարդը վերածվեց սովորական մարդու, այնպիսի՝ ինչպիսին գիտեք այսօր, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Դրա համար էլ, սիրելիներս, ԱՅԴՔԱՆ ԿԱՐՆՈՐ է վերահսկել ձեր ամեն մի միտքը, ամեն մի հույզը, որպեսզի հետ չգլորվեք եռաչափության անդունդը, իսկ բացասական բնույթ կրող մտքերն ու զգացմունքները անհապաղ լուծեք Միրով՝ այդ միակ փրկարար «համադեղով»:

Կասեցրե՛ք մարդկանց բաժանող ավերիչ ծրագրերը՝ թշնամանքի և ատելության ծրագրերը:

Լույսով և Միրով լցրեք ինքներդ ձեզ և ձեր բովանդակ կյանքը, որպեսզի դառնաք անձեռնմխելի, որպեսզի գտնեք ձեր Աստվածային էությունը, որպեսզի վստահ և արագ շարժվեք Համբարձման ուղիով դեպի մարդկության Ոսկեդարը:

Ես օրհնում եմ ձեզ դրա համար, զավակներս:

Ամեն ինչ վերադառնում է ի շրջանս յուր

Այսօրվա ուղերձը փոքր-ինչ անսովոր կլինի, որովհետև պատմելու եմ ձեզ այն վաղնջական ժամանակների մասին, երբ դուք դեռևս մարդ-Հրեշտակներ էիք, ցույց տալու համար, թե ինչ ճանապարհի ստիպված եղաք անցել, որպեսզի ամեն ինչ վերադառնա իր սկզբնական տիեզերք:

Արդեն պատմել եմ այն ժամանակաշրջանի մասին, երբ դուք ապրում էիք Հինգերորդ չափման մեջ և տիրապետում էիք բոլոր այն ունակություններին, որոնք հատկանշական են այդ չափմանը:

Այսօր ավելի մանրամասն կպատմեմ, թե ինչպես էր կառուցվում ձեր կյանքը: Ես կանեմ դա հանուն նրա, որ կարողանաք հասկանալ, թե ինչպես պիտի կառուցեք ձեր կյանքը հիմա, երբ կանգնած եք նոր, իսկ իրականում՝ ձեզ համար այնքան հին իրականության շեմին:

Այն վաղեմի ժամանակներում չկար ոչ մի պայմանականություն, ոչ մի կարծրատիպ, քանի որ բոլոր հարաբերությունները մարդկանց միջև կառուցվում էին բացառապես հոգու կանչով:

Ժամանակին ձեր հոգիները Երկիր էին գալիս լիովին հիշելով, թե ինչ պիտի անեն այստեղ, ինչի համար են եկել, որն է իրենց նախասահմանումը:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Բացի այդ, ունակ էին ճանաչելու իրենց հարազատ հոգիներին՝ երկրորդ կեսերին: Դրա համար էլ այն ժամանակ չէին լինում անհաջող ամուսնություններ, բարդ ու ցավալի հարաբերություններ: Ամեն ինչ ներդաշնակ էր և բնական: Եվ դա մեծագույն բարեբախտություն էր երեխաների համար, որոնք ծնվում էին սիրո և ներդաշնակության մեջ:

Բոլոր ողբերգությունները, որ հետագայում լինում էին տղամարդու և կնոջ միջև, մարդկությանը Դրակոնյանների ռասայի պարտադրած բաժանման հետևանքը եղան: Նրանց հարաբերությունները սկսեցին կառուցվել սեփականատիրության և միմյանց նկատմամբ գերազանցության հիման վրա:

Հոգիները սկսեցին չճանաչել իրար, և այդ պատճառով ամեն ինչ խառնվեց Երկրի վրա: Իսկ եթե հանկարծ հարազատ կեսերը գտնում էին իրար, դա լինում էր խիստ հազվադեպ և ավելի շուտ բացառություն էր օրինաչափությունից:

Սակայն դուք միշտ էլ ինտուիտիվ կերպով իմացել եք, որ Երկրի վրա ապրում է ձեր երկրորդ կեսը, և ձգտել եք գտնել նրան: Ոչ ոք ի վիճակի չեղավ դա ջնջելու ձեր խորքային հիշողությունից:

Ճիշտ նույն կերպ, ձեզնից շատերը ինտուիտիվ կերպով զգում են, որ իրենց կյանքով չեն ապրում. ճիշտ տեղում չեն աշխատում, ճիշտ մարդու հետ չեն ապրում և ճիշտ բանի վրա չեն ծախսում իրենց ժամանակը: Տառապում է նրանց Հոգին, փորձում դուրս պրծնել այդ արատավոր շրջանից, ինչը հազվադեպ է հաջողվում, որովհետև նրանց «ձեռուտը» կապկպված է կյանքի սոցիալական պայմաններով:

Իսկ հիմա, սիրելիներս, եկել է ժամանակը հիշողության խորքերից վեր հանելու ձեր բոլոր Աստվածային գիտելիքները, դուրս թողնելու բոլոր իսկական զգացմունքները, ապավինելու ձեր ինտուիցիային, սովորելու անսալ ձեր Բարձրագույն Եսին և չհանձնվել հասարակությանն ու իր արհեստականորեն պարտադրած արժեքներին:

Դա ամենին չի նշանակում, թե հարկավոր է «ջարդուփշուր» անել ամեն ինչ. միայն ձեր Էգոն՝ հաճույքների և ամենաթողության ծարավի, կարող է ձեզ դրան դրդել:

Ձեզ իրապես փոխել և ձեր ճշմարիտ բնության նախնական իմացությունները վերադարձնել կարող է ձեր մշտական հոգևոր աճը, ձեր թրթռանքի վերելքը, լիակատար գիտակցումն ու ի սրտե ընդունումը Երկրի վրա ընթացող համընդհանուր փոփոխությունների, որոնք թե՛ ձեր Երկիրը, թե՛ հենց ձեզ տանում են դեպի Համբարձում՝ այդ մեծագույն շնորհը, «պարգևատրությունը», որին արժանացել է մարդկությունն իր բոլոր տառապանքների, դժբախտությունների և զրկանքների համար, որ դարեր ու դարեր ստիպված էք եղել կրել:

Ես լիահույս եմ, զավակներս, որ այդ վերադարձը դեպի ձեր ակունքները կընթանա ձեզ համար հնարավորինս անցավ և ներդաշնակորեն:

Եվ ես օրհնում եմ ձեզ դրա համար, սիրելիներս:

Գլորիա մոլորակը

Իմ այսօրվա ուղերձով ես ուզում եմ ձեզ պատմել մի մոլորակի մասին, որը շատ մեծ դեր է խաղում ձեր կյանքում, թեև դուք չեք էլ կռահում այդ մասին:

Խոսքը Գլորիա մոլորակի մասին է, որը գտնվում է Արեգակի մյուս կողմում և այդ իսկ պատճառով անտեսանելի է ձեզ: Դա մի զարմանալի մոլորակ է, որն իր մեջ ամփոփում է այն լավագույնը, որ ստեղծվել է Երկրի վրա իր գոյության սկզբից ի վեր՝ այլազան քաղաքակրթությունների կողմից: Եվ այնտեղ բնակվում են ամենալուսավոր հոգիները, որոնք երբևէ ապրել Երկրի վրա:

Ինչու՞ որոշեցի այսօր պատմել ձեզ այդ մասին: Որովհետև Գլորիան ապագա Երկրի նախատիպարն է: Նա արդեն գտնվում է Հինգերորդ չափման մեջ, և այնտեղ տիրում է այնպիսի մթնոլորտ, ինչպիսին կլինի ձեր Մոլորակի վրա իր Համբարձումից հետո:

Հիմա այնտեղ աշխատանքային եռուզեռ է, և պայմանավորված է դա նրանով, որ Գլորիայի շատ բնակիչներ որոշել են դառնալ ձեր կամավոր օգնականները և հիմա յուրացնում են ձեզ հետ հաղորդակցվելու նոր եղանակներ, որպեսզի սովորեցնեն ձեզ ապրել նոր պայմաններում և օգտագործել ձեզ համար նոր հնարավորությունները:

Սա մեծ աշխատավորների մոլորակն է, քանի որ այնտեղ են գնում միայն այն հոգիները, որոնք ընտրում են ծառայությունը մարդկանց: Այնտեղ տիրում է գործնական և ստեղծագործական մթնոլորտ: Ամեն ոք զբաղված է իր գործով, այն գործով, որ իր հոգին է ընտրել:

Այս մոլորակը բաց է երկրացիներին բարեկամ բոլոր քաղաքակրթությունների համար, որոնք ցանկանում են իրենց ներդրումը բերել այնպիսի վիթխարի ծրագրի, ինչպիսին է Երկրի Անցումը Հինգերորդ չափում:

Բազմաթիվ գիտնականներ, դերասաններ, երգիչներ, որոնք իրենց տաղանդով զարդարում էին Երկիրը, այս հրաշալի մոլորակն են տեղափոխվել Երկիրը լքելուց հետո: Նրանք ամենքը հիմա հետաքրքրությամբ հետևում են Երկրի անցուդարձին, փորձելով իրենց հասանելի բոլոր միջոցներով օգտակար տեղեկատվություն հասցնել մարդկանց:

Գլորիայի բնակիչների հետ հաղորդակցությունը թույլ կտա ձեզ շատ արագ հարմարվել նոր կյանքին. չէ՞ որ տեսնելով ծանոթ դեմքերը նրանց, ովքեր ժամանակին հարգված և սիրված են եղել Երկրի վրա, ձեր հոգին կջերմանա և ձեզ կթվա, թե երկար, դժվարին ու հոգնեցուցիչ գործողումից վերադարձել եք տուն և վերջապես ձեզ կդիմավորի հարազատ ու ջերմ օրրանը, ուր տիրում է սիրո և փոխըմբռնման մթնոլորտ, ուր ծանոթ և մտերիմ դեմքեր են, ուր կարող եք հանգստանալ հոգով և զբաղվել ձեր վաղուց երազած գործով, որին ցանկացել եք նվիրել ձեր կյանքը, սակայն չի հաջողվել ձեզնից անկախ պատճառներով:

Գլորիա մոլորակը Երկրի հայելային անդրադարձն է, բայց իդեալական տարբերակով, որտեղ չկա երկվություն, ուստի և՛ բացասական էներգիաների ու հույզերի որևէ դրսևորում:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Նրա բնությունը շատ նման է Երկրի բնությանը, բայց կուսական է և մաքուր, այդ պատճառով էլ բոլոր գույները թվում են ավելի վառ և հագեցած:

Երկար ժամանակ Գլորիան դուրս է եղել ձեր տեսադաշտից, և ահա եկել է ժամանակը իմանալու ձեր քրոջ մասին, որն անհամբեր ձեզ է սպասում և երագում է ձեզ տեսնել նույնքան հանգիստ, երջանիկ և ներդաշնակ, որքան այդ չքնաղ մոլորակի բնակիչներն են:

Հենց որ Երկիրը տեղափոխվի հինգերորդ չափում, դուք կկարողանաք հեշտ ու հանգիստ թռչել միմյանց հյուր, կսովորեք ապրել հեքիաթային աշխարհում, արարել ձեր կյանքն ու շրջապատող իրականությունը ձեր մտքի և դիտավորության ուժով:

Եվ այդ ամենը շատ մոտ է արդեն, զավակներս:

Էներգետիկական միասնությունը Տիեզերքի հետ

Տիեզերքի հետ ձեր էներգետիկական միասնության մասին

Այսօր մենք կվերադառնանք էներգիաների թեմային, որոնք ավելի ու ավելի մեծ տեղ են գրավում ձեր կյանքում, և դուք սկսում եք առավել խորությամբ գիտակցել նրանց իսկական նշանակությունը:

Եվ հիմա քննության կառնենք նրանց մեկ այլ ասպեկտը՝ այն, թե ինչպես են նրանք փոխազդում ձեր ներսում, այսինքն՝ ձեր անձնական տարածքում, և ինչպես են կապված Տիեզերքի էներգետիկական տարածության հետ:

Արդեն բազմիցս ասվել է, որ յուրաքանչյուր մարդ մի ամբողջ առանձին աշխարհ է, մի Տիեզերք, ավելի ճիշտ՝ վերջինիս փոքրիկ պատճենը: Նշանակում է, բոլոր պրոցեսները, որ ընթանում են Տիեզերքում, ականա անդրադառնում են ձեզ վրա՝ պրոյեկտվում են ձեր նուրբ մարմիններին:

Եվ ես կփորձեմ բացատրել, թե ինչպես է դա տեղի ունենում:

Պատկերացրեք ինքներդ ձեզ գնդի տեսքով, որի ներսում զետեղված է ձեր ֆիզիկական մարմինը, որին հետևում են ձեր նուրբ մարմինները: Առավել հաճախ խոսվում է մարդու յոթ մարմինների մասին, բայց իրականում դրանք ավելի շատ են, և ամեն նուրբ մարմին նախորդից ավելի ու ավելի է հեռանում, այդ պատճառով էլ դրանք գնում են դեպի անսահմանություն, և ձեզ տրված չէ հետևել նրանց:

Ինչու՞ է այդպես:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Բանն այն է, որ դուք բոլորդ ծագել եք մեկ ակունքից, որի հետ կապված եք անխզելի թելերով: Եվ որքան զարգացած է մարդը հոգեպես, այնքան մոտ է Աստվածային ակունքին:

Դա անչափ դժվար է բացատրել՝ հենվելով մարդկային հասկացությունների վրա, բայց եթե շատ պարզ ասենք, այստեղ նույնպես գործում է Ձգողության օրենքը:

Քանի որ ամենայն գոյի Աստվածային ակունքը (նախահիմքը) անասելի բարձր թրթռանք ունի, մարդիկ իրենց թրթռոնների վերելքի հետ սկսում են ավելի ու ավելի ուժգին ձգվել դեպի նա:

Դուք կարող եք նույնիսկ պատկերացնել այդ Ակունքը մագնիսի տեսքով, իսկ մարդկային հոգիները՝ փոքրիկ մետաղյա գնդիկների, որոնք տարբեր հեռավորություն ունեն նրանից:

Եվ իրենց հոգևոր հասունացման հետ այդ Հոգի-«գնդիկներն» ավելի ու ավելի են մոտենում «մագնիս»-սկզբնաղբյուրին, մինչև լիովին միաձուլվեն նրա հետ, որն, անշուշտ, միլիոնավոր տարիներ կպահանջի:

Իսկ մագնիսի շուրջը կան որոշակի «գոտիներ»՝ թրթռոնների իրենց համակազմով, որոնցում ապրում են տարբեր քաղաքակրթություններ: Նրանք բոլորը շարժվում են ցածրագույնից դեպի բարձրագույնը, անցնելով տարատեսակ թրթռոյին մակարդակ ունեցող ֆոտոնային շերտերի միջով:

Այժմ ձեր Երկիրը մեծ մասամբ մտել է Հինգերորդ չափման «գոտու» մեջ, և ես տեսնում եմ, որ օրեցօր ավելի ու ավելի շատ մարդկային հոգիներ են ձգվում դեպի այդ Աստվածային մակարդակը:

Իսկ մյուս բոլոր քաղաքակրթությունները, որոնք արդեն իսկ այնտեղ են, ջանում են օգնել ձեզ հաղթահարելու վերջին խոչընդոտը, որը բաժանում է ձեր Հոգիները Սիրո Աստվածային տարածությունից, որովհետև նրանք բոլորն անցել են այդ փորձով և հրաշալի գիտեն, թե ինչ մեծագույն երջանկություն է՝ դուրս պրծնել երկվության աշխարհից՝ գոյատևման իր դժնի օրենքներով, և հայտնվել մի տեղ, ուր Հոգին ընկղմված է Սիրո մեջ, իր նման լուսավոր Հոգիների հետ, և որտեղ պետք չէ այլևս կռիվ տալ գոյության համար, այլ՝ պարզապես ԱՊՐԵԼ և ՎԱՅԵԼԵԼ ԿՅԱՆՔԸ:

Ինչու՞ որոշեցի պատմել ձեզ այդ մասին, սիրելիներս:

Ես շատ եմ ուզում, որ դուք լավ հասկանաք Տիեզերքի էներգետիկական կառուցվածքի սկզբունքը, և փորձում եմ բացատրել ամենահասարակ խոսքերով, որովհետև գիտեմ, որ ամեն ոք ի վիճակի չէ ըմբռնելու բարդ գիտական աշխատություններ՝ լոկ գիտնականներին մատչելի իրենց տերմիններով:

Իսկ ինձ համար չափազանց կարևոր է, որ դուք սրտով, Հոգու բոլոր թելերով զգաք ձեր փոխադարձ կապը Տիեզերքի ամենայն գոյի հետ. որպեսզի գիտելիքները գան ոչ թե ձեր տրամաբան մտքից, այլ ձեր խորքային հիշողությունից, ձեր մեծագույն նախասահմանման գիտակցումից՝ վերադառնալ այնտեղ, որտեղից եկել եք մի ժամանակ:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Եվ ես տեսնում եմ, որ ձեզնից շատերը, իրենց երկարուձիգ հոգևոր ճանապարհին անցնելով, կանգնած են Համբարձման շեմին՝ ձեր չքնաղ Երկրի հետ միասին:

Ձեզ անչափ սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ:

Ընդունեց Մարթան, 3 նոյեմբերի 2016 թ.

Էներգետիկական փոխներգործության մասին

Ես ուզում եմ այսօր ձեզ պատմել, թե ինչպես է կատարվում էներգետիկական փոխներգործությունը ձեր Գալակտիկայի մարդկանց միջև և ընդհանրապես ողջ Տիեզերքում:

Այդ պրոցեսը շատ բարդ է և բազմակողմ, որովհետև հսկայական քանակությամբ բաղադրիչներ է պարունակում իր մեջ: Դրանցից շատերը խորին են ձեր ըմբռնման համար, այդ իսկ պատճառով ես կանգ կառնեմ միայն նրանց վրա, որոնք գործնական նշանակություն ունեն ձեզ համար և որոնք դուք ի վիճակի եք ըմբռնելու դեռևս եռաչափ աշխարհում ապրող մարդու ձեր գիտակցությամբ:

Եվ այսպես, սկսենք նրանից, որ Երկիր իջնող յուրաքանչյուր Հոգի այստեղ է գալիս ոչ մենակ: Նրա հետևից միշտ ձգվում է ուրիշ մարդկային հոգիների «փեշը», որոնք գիտակցաբար ընտրել են համատեղ մարմնավորումը նրա հետ, որպեսզի լուծեն իրենց վաղեմի խնդիրները, քանդեն կարմայական հանգույցները կամ պարզապես չբաժանվեն իրարից, երբ խոսքը վերաբերում է հարազատ հոգիներին, որոնք արդեն ձուլվել են իրար, և եթե այդպիսի Հոգու մի կեսը որոշել է Երկրի վրա ինչ-որ բան հասցնել իր ավարտին, մյուս կեսը Երկիր կիջնի ուղղակի նրան «ընկերակցելու»:

Այդ պատճառով միշտ ուշադիր եղեք ձեր մերձավորների նկատմամբ, հատկապես այն մարդկանց, որոնց հետ կապված եք ոչ սովորական հարաբերություններով: Ամենայն հավանականությամբ դրանք հենց այն մարդիկ են, որոնց հետ պետք է մինչև վերջ ներդաշնակեք ձեր հարաբերությունները:

Իսկ հիմա քննության առնենք այդ պրոցեսի էներգետիկական բաղադրիչը: Եվ դիտարկենք կոնկրետ օրինակով, որ ամենից հաճախ է պատահում կյանքում:

Վերցնենք մի ընտանիք, որը կազմված է երեք անձից՝ ամուսնուց, կնոջից և երեխայից: Կհամաձայնեք ինձ հետ, սիրելիներս, որ Երկրի վրա անկարելի է գտնել երկու միատեսակ ընտանիք, նույնիսկ եթե արտաքուստ նման են թվում իրար:

Մարդկային հարաբերություններն այնքան նուրբ են, այնքան երանգներ ունեն իրենց մեջ և այնպես փխրուն են, որ երբեմն մի անզգույշ խոսքը կարող է ընդմիշտ փշրել դրանք:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Ինչու՞ է այդպես և ինչպե՞ս կարող եք պաշտպանել ձեզ, հասնել ներդաշնակության, ընտանիքում հաստատել խաղաղություն ու սեր:

Իսկ հիմա պատկերացրեք այդ փոքրիկ ընտանիքի բոլոր անդամներին էներգետիկական թանձրուկների տեսքով, որոնցից յուրաքանչյուրն ունի թրթիռային իր մակարդակը, իր հուզական և մտային ֆոնը և ուրեմն՝ աուրայի տարբեր գույներ և նուրբ մարմինների նոսրության տարբեր մակարդակ:

Նրանցից հոգեպես ամենազարգացածի նուրբ մարմինները կարող են հսկայական չափեր ունենալ և իրենցով լցնել տան ողջ տարածությունը, մյուսինը, որ չափից դուրս կպած է գետնին և նյութեղեն, դրանք կարող են առավելագույնս «մամլված» լինել, իսկ երրորդի մոտ, որը նոր-նոր է ոտք դրել հոգևոր ուղի, դրանք կարող են լինել միջին չափի:

Դե իսկ հետո պատկերացրեք, թե ինչ է կատարվում այդ տանը էներգետիկական պլանում այդքան տարբեր էակների փոխներգործության դեպքում: Հոգևոր մարդու դրական էներգիաները և ընտանիքի «նյութեղեն» անդամի բացասական էներգիաները մշտապես բախվում են իրար, հակառակվելով և անվերջ պայքարելով, դրանով իսկ հարուցելով տարալիցք հույզերի արձակած ամենատարբեր էներգիաների քառսային շարժումներ. մի կողմից՝ սիրո, բարության, ըմբռնումի, լիակատար ներման. . . զգացմունքների, մյուս կողմից՝ դժգոհության, չհասկանալու, ջղայնության, վիրավորանքի. . .

Այդ ուղեծրում է հայտնվում նաև երրորդ անդամը, որպես կանոն՝ երեխան, որը «չեզոքություն» է պահում, բայց չէ՞ որ այդ էներգիաները բառիս բուն իմաստով թնածում են օդում, լցնելով շրջակա ամբողջ տարածությունը: Նա ոչ մի տեղ չի կարող թաքնվել դրանցից և դառնում է այդ էներգետիկական «հաշվեհարդարների» ակամա գոհը:

Ժամանակի հետ, իր աուրան խոցող մշտական էներգետիկական գրոհների հետևանքով, նա դառնում է հոգեպես անհավասարակշիռ, որը հետագայում հանգեցնում է շատ հիվանդությունների: Եվ իհարկե, առանձնապես խոցելի են երեխաները, որոնց նուրբ աուրաները տուժում են առաջին հերթին:

Մինչդեռ շատ հաճախ ամուսինն ու կինը արտաքուստ թվում են շատ հանգիստ, ժպտում են իրար և վարում սովորական կենսակերպ, սակայն նրանց արձակած էներգիան ապրում է իր կյանքով: Այն չի կարող խաբել և ձևացնել, վատ խաղի ժամանակ ուրախ դեմք ցույց տալ:

Մարդու էներգիան իր ներքին էությունն է՝ մաքուր վիճակով, իր էներգետիկան է, հոգևոր զարգացման մակարդակը, որը չափվում է խիստ որոշակի միավորներով՝ թրթիռներով, այլ ոչ թե ձևական ժպիտներով և ճիշտ խոսքերով:

Տիեզերքին անկարելի է խաբել: Նմանապես անկարելի է խաբել և մարդուն, որովհետև նա էլ Տիեզերքի մասնիկն է՝ նրա փոքրիկ պատճենը:

Այդ է պատճառը, որ մարդիկ իրար ընկալում են ենթագիտակցական՝ էներգետիկական մակարդակում, և ոչ թե բառերի ու արարքների: Դա կարելի է անգամ անվանել Աստվածային

«ատավիզմ»՝ բառի լավ իմաստով, որ ոչ ոք և ոչինչ չկարողացավ արմատախիլ անել ձեր միջից բազում դարերի ընթացքում:

Սրանով մենք կավարտենք այսօր, իսկ իմ մյուս ուղերձում ես կպատմեմ, թե ինչ է հարկավոր անել, որպեսզի ինքներդ ձեզ և ձեր մերձավորներին էներգետիկական ներդաշնակության բերեք, չխախտելով նրանց ազատ կամքը և էներգետիկական տարածությունը:

Էներգետիկական փոխներգործության մասին (շարունակություն)

Եվ այսպես, սիրելիներս, շարունակենք մեր զրույցը մարդկանց էներգետիկական փոխներգործության մասին:

Ուրեմն ի՞նչ է պետք անել՝ դադարեցնելու համար այդ «հակադրությունների պայքարը», որը խաթարում է ձեր ներդաշնակ վիճակը, թունավորում կյանքը և անխուսափելիորեն հանգեցնում հիվանդությունների՝ հոգեկան և ֆիզիկական:

Առաջին հերթին պիտի հասկանաք, թե որն է ձեր մեջ այն գրգռիչ գործոնը, որը հրահրում է դիմացինի բացասական էներգիայի մշտական արտավիժումները: Ուշադիր հետևեք դրան:

Երբեմն դա շատ դժվար է լինում որոշել, որովհետև մարդիկ սովոր չեն բացեիքաց խոսելու իրենց մտածածի մասին, հաճախ էլ մարդը պարզապես չի կարողանում հասկանալ և հստակ ձևակերպել իր դժգոհությունը մյուսից, որովհետև չընդունելը սուս էներգետիկական մակարդակում է լինում:

Մարդկանց թրթիռները կարող են պարզապես չհամընկնել, թեև արտաքուստ ամեն ինչ լավ ու ճիշտ է երևում՝ մարդկային տեսանկյունից: Հենց սրանում է, սիրելիներս, ամբողջ բարդությունը:

Վերհիշեք դեպքեր ձեր կյանքից: Երբեմն հանդիպում եք բոլոր առումներով ուղղակի իդեալական մարդու, բայց նրա երկրորդ կեսը չգիտես ինչու միշտ դժգոհ է նրանից: Ողջ խնդիրն այն է, որ էներգիաների մակարդակում նրանք անհամատեղելի են. մեկն արդեն ահագին առաջադիմել է իր հոգևոր զարգացման ճանապարհին, իսկ մյուսը նոր-նոր է ոտք դնում այդ ուղու վրա:

Ընդ որում, վերջինս կարող է լինել լավ ու կարգին մարդ, բոլորի հանդեպ բարյացակամ, ուրիշների համար ապրող, բայց մտածում է բացառապես նյութական՝ տրամաբանական կատեգորիաներով, այսինքն՝ ապրում է խելքով, այլ ոչ սրտով:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Եվ այդ պարագայում ամուսիններից մեկի համար շատ դժվար է լինում բացատրել, թե հատկապես ինչը դուր չի գալիս իր ամուսնու (կնոջ) մեջ. նա պարզապես զգում է ինտուիտիվ (էներգետիկական) մակարդակում, որ նա ԻՐ ՄԱՐԴԸ ՉԷ:

Որպես կանոն, նման դեպքերում ասում են՝ «բնավորությունները չհարմարվեցին»: Իսկ իրականում նրանց ԷՆԵՐԳԻԱՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՐՄԱՐՎԵԼ: Բայց չէ՞ որ նրանք ինչ-որ պատճառով սիրել են իրար և ամուսնացել:

Ինչպե՞ս լուծել այդ հակասությունը, սիրելիներս, ինչպե՞ս պահպանել ընտանիքը: Թե՞ ընդհակառակը՝ բաժանվելն ավելի լավ կլինի:

Իհարկե, այստեղ չկա ընդհանուր դեղատոմս, ամեն ընտանիք բացառիկ է: Իրավիճակը շտկել կարող է միայն անհաջողության պատճառների պարզ ու հստակ գիտակցումը հատկապես էներգետիկական՝ հոգևոր դիրքերից:

Եվ եթե նա, ով զարգացման ավելի ցածր մակարդակ ունի, ցանկանա հասնել իր կողակցի մակարդակին, այդ դեպքում շանսեր կլինեն վերականգնելու ընտանիքի խաղաղությունն ու ներդաշնակությունը՝ շնորհիվ այն բանի, որ ամուսինների թրթիռները վերջապես կարձագանքեն միմյանց, իսկ էներգիաները ոչ թե կվանեն, այլ կձգեն իրար:

Բայց, ցավոք, պատահում է և այնպես, որ հոգևոր-բարձր և լուսավոր մարդիկ, ընկնելով ցածրաթրթիռ նյութական միջավայր, կորցնում են իրենց նախնական ունակություններն ու բարձր էներգետիկան՝ հարմարվելով կողակցին:

Սակայն նման ընտանիքները հազվադեպ են երջանիկ լինում, քանի որ այդ մարդու Հոգին ձգտում է դուրս պրծնել, փորձում է վերականգնել կորսված դիրքերը, և նման «անձի երկատման» հետևանքը լինում է ոչ թե երջանկությունը, այլ տառապանքը:

Ուրեմն ինչպե՞ս գտնել ոսկե միջինը, զավակներս, որպեսզի կյանքն ընթանա սիրո, խաղաղության և համաձայնության մեջ:

Միակ խորհուրդը, որ կարող եմ ձեզ տալ՝ միշտ լինել այն, ինչ ե՛ք, չթաքցնել ձեր իսկական էությունը, չձգտել երևալ ավելի լավը, քան կաք իրականում, չհարմարվել որևէ մեկին, չխաղալ ուրիշի դեր, որովհետև դա ոչ միայն շատ ուժ է խլում ձեզնից, այլև զրկում է ձեզ ու ձեր հարազատներից ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ մեջ ապրելու հնարավորությունից՝ անկեղծության և հոգեկան ջերմության բարձր թրթիռներից:

Եթե սովորեք միշտ լինել այն, ինչ եք, ասել այն, ինչ ԻՍԿԱՊԵՍ ԶԳՈՒՄ ԵՔ, կպահպանեք մանկական անմիջականությունն ու հոգու մաքրությունը, հետևաբար և ձեր Աստվածայնությունն ու ամենաբարձր թրթիռները, որոնք կնպաստեն ձեզ և ձեր հարազատներին ապրելու խաղաղության, սիրո և համաձայնության մեջ և կլցնեն ձեր տունը հոգեկան ջերմությամբ և հարմարավետությամբ:

Բնության տարերքներ

Բնության տարերքներ. ՋՈՒՐ

Այսօր մենք փոքր-ինչ կշեղվենք Համբարձման թեմայից և կգրուցենք այն մասին, թե ինչ տեղ է գրավում բնությունը մարդու կյանքում, ավելի ճիշտ՝ ինչպես են ազդում բնության չորս տարերքները մարդու կյանքի վրա և, հակառակը, ինչպես է ազդում նրանց վրա մարդը:

Սովորաբար մարդու և բնության փոխներգործությունը դիտարկվում է շատ նեղ տեսանկյունից. շեշտը դրվում է այն բանի վրա, որ մարդն ադապտում է շրջակա միջավայրը, վերջինս էլ նրան պատասխանում է նույն կերպ: Այդ ամենը ճիշտ է՝ անդրադարձման օրենքը գործում է անփոփոխ կերպով:

Սակայն այսօր մենք կխոսենք բնության տարերքների մասին ավելի լայն իմաստով՝ նրանց Աստվածային ծագման և մարդու կյանքում ունեցած դերի:

Սկսենք մարդուն ամենամոտ՝ Ջրի տարերքից, քանի որ նա է հիմնականում կազմում ձեր ֆիզիկական մարմինը և կյանքի աղբյուրն է ամենայն կենդանի օրգանիզմի:

Ջուրը հիրավի Աստվածային սուբստանց է, որն առ այսօր հանելուկ է մնում ձեզ համար, որովհետև անհամար, անբացատրելի և մարդուն չենթարկվող որակներ է բովանդակում իր մեջ:

Թվում է՝ նա ապրում է իր ուրույն կյանքով, փոխելով իր կառուցվածքը, վիճակը, պարամետրերը:

Նա կարողում և իր մեջ է պահում տեղեկությունը: Ունակ է ազդելու ձեր մարմինների վրա, որովհետև դրանք 80 % բաղկացած են ջրից:

Ուրեմն ո՞րն է նրա գաղտնիքը:

Բանն այն է, գավակներս, որ Ջուրը կրում է իր մեջ կյանքի կոդը: Եվ հիմա ես կբացատրեմ, թե ինչ է դա նշանակում:

Երբ ստեղծվում էր ձեր Տիեզերքը, որպես կենդանի էակի բջջի հիմք վերցվել է կենարար ջրի միկրոսկոպիկ կաթիլը, որի մեջ ներդրվել էին զարգացման որոշակի կոդեր:

Բույսի, կենդանու, մարդու յուրաքանչյուր տեսակ ուներ իր անկրկնելի կոդը, որը հետագայում սկսեց բաժանվել ենթակոդերի, ինչի շնորհիվ էլ Երկրի վրա գոյություն ունի բնության և իր բնակիչների այսօրինակ հարստություն և բազմազանություն:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Կենդանի էակի ծննդյան այդ սրբազան պրոցեսը խոսքերով նկարագրելի չէ: Բայց ես շատ եմ ուզում, որ դուք իմանաք, որ հենց Ձուրն է դարձել Երկրի վրա եղած ամենայն կենդանիի նախամայրը:

Դրա համար էլ ոչ մի կենդանի բան չի կարող գոյել առանց Ձրի: «Ձուրը կյանք է»-ն արդեն մարդու մշտական արտահայտություններից է դարձել:

Եվ այդ պատճառով, աղտոտելով և ցամաքացնելով ձեր մոլորակի ջրամբարները, դուք բառիս բուն իմաստով զրկում եք ձեզ կյանքից: Եվ ես ուրախ եմ, որ մարդկությունն ի վերջո գիտակցել է դա և ջանում է ուղղել իր սխալները:

Բայց մի բան առանձնապես հաճելի է ինձ. ես տեսնում եմ, որ վերջին տարիներին դուք արդեն հասկացել եք, որ կարող եք ներագդել ջրի վրա ձեր մտքերով և զգացմունքներով: Սա արդեն իսկական առաջընթաց է մարդու գիտակցության մեջ:

Չէ՞ որ այդ կերպ դուք կարող եք փոխել ձեր մարմինը, բուժել հիվանդությունները, ապրել ներդաշնակության և սիրո մեջ:

Ձեր գիտնականները սովորել են լուսանկարել այս կամ այն մտքի և զգացմունքի ազդեցությանը ենթարկված ջրի մոլեկուլները: Դա նշանակում է, սիրելիներս, որ դուք արդեն ունակ եք գիտակցելու, որ Սիրո և Բարության զգացումները լիովին փոխում են ձեր մարմնի կառուցվածքը:

Խորհեք այս բառերի մասին՝ «լուսային բյուրեղային մարմին»: Դա նշանակում է, որ ձեր Հոգուց բխող Լույսը փոխակերպում է ձեր մարմնի բյուրեղիկները, և այն դառնում է Աստվածային՝ հետևելով ձեր Աստվածային Հոգուն, որը գիտակցել է Երկրի վրա ունեցած իր իսկական տեղը և իր անսահման կարողությունները:

Դուք դառնում եք Աստվածամարդ: Վերադառնում եք ձեր ելման վիճակին, չէ՞ որ ժամանակին հենց Աստվածներ էիք՝ Երկիր իջած:

Միշտ հիշեք այս մասին, գավակնե՛րս. . .

Բնության տարերքներ. ՕԴ

Այժմ ես ուզում եմ շարունակել մեր զրույցը բնության տարերքների մասին:

Օդ: Սա մի բան է, առանց որի բոլորներ անգամ չի կարող ապրել մարդը, ինչպես և որևէ այլ կենդանի էակ:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Այս Աստվածային սուրստանցը սնուցում է Երկրին եղած ամեն ինչ, այն բաղկացած է աչքին անտեսանելի մանրագույն թափանցիկ գազածին մոլեկուլներից, որոնց կառուցվածքը նման է Տիեզերքի կառուցվածքին:

Օդն առաջ է եկել Ջրի ի հայտ գալու հետ միաժամանակ, քանի որ նրանք անբաժան են միմյանցից: Երկու փոխներթափանցող սուրստանց, որոնք էլ հենց կազմում են կյանքի բանաձևը:

Օդն ամբողջ ժամանակ փոխանակության պրոցեսի մեջ է, քանի որ բոլոր կենդանի արարածների օրգանիզմները օդի վերամշակման յուրահատուկ «գործարաններ» են:

Ներշնչելով օդի մի բաղադրություն, նրանք արտաշնչում են ուրիշ բաղադրություն: Եվ իհարկե դա պատահաբար չի մտածվել:

Բանն այն է, որ Օդը բնության տարերքներից ամենաշարժունն է և վայրկյան անգամ չի կարող անգործ մնալ: Դա բացատրվում է նրանով, որի սկզբանե այն մտածվել է որպես կենդանի օրգանիզմի յուրաքանչյուր բջիջը կենսական էներգիայով հագեցնող Աստվածային տարր:

Բայց քանի որ օդի մոլեկուլն արտացոլում է մշտնջենական շարժման մեջ գտնվող Տիեզերքի կառուցվածքը, ապա այն ամենը, ինչ կապված է իր հետ, նույնպես մշտական շարժման մեջ է, անգամ եթե դա տեսանելի չէ մարդու աչքին:

Եվ բոլորովին պատահական չէ, որ մարդը համարվում է մեռած, եթե այլևս չի շնչում: Դա նշանակում է՝ օդը դադարել է շրջանառել նրա օրգանիզմում, այսինքն՝ նրա Տիեզերքը մահացել է՝ դադարեցրել է իր շարժը:

Այս ամենը, սիրելիներս, բավական բարդ է ձեր ըմբռնման համար, բայց ես ուզում եմ, որ դուք հասկանաք այս տարերքի գլխավոր էությունը՝ նրա մշտական շարժումը:

Իսկ հիմա կպատմեմ, թե ինչը կարող է առաջ բերել նրա մոլեգնությունը, որը տխուր հետևանքների է հանգեցնում:

Ուժգին քամիները, պտտահողմերն ու փոթորիկները հետևանք են այն բանի, որ ձեր մոլորակի ինչ-որ հատվածում խախտվել է փոխանակության պրոցեսը, կամ, այլ կերպ ասած, դադարել է աշխատել օդի վերամշակման «գործարանը»:

Ինչպե՞ս է դա արտահայտվում գործնականում: Օրինակ, ձեր մոլորակի ինչ-որ վայրում տեղի է ունեցել երկրաշարժ, այսինքն՝ երկրակեղևի տեղաշարժ: Այդպիսով խախտվել է օդի տարբեր բաղադրիչների փոխանակության պրոցեսը:

Իսկ քանի որ Երկիրը միասնական օրգանիզմ է, նրա մի հատվածի խաթարումը անմիջապես անդրադառնում է մեկ այլ հատվածի վրա: Դա կարելի է համեմատել այն բանի հետ, թե ինչպես հազից կամ ինչ-որ բանից խեղդվողի մոտ առաջանում է շնչառության խանգարում, և նա սկսում է բերանով ջղաձգորեն օդ կուլ տալ:

Նույնը կատարվում է և Երկրի հետ: Պտտահողմերն ու փոթորիկները նրա շնչառության խանգարումներն են, որ հարուցվում են բնական աղետներով:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Եվ տարերքն այս անկառավարելի է, որովհետև մարդն իր գիտակցությամբ անկարող է ընդգրկել կատարվածը, տեսնել աղետի պատճառը, նշանակում է՝ ի վիճակի չէ նաև կանխել այն:

Միակ բանը, որ նա ի գործու է անելու օդային տարերքը զսպելու համար, ապրել Սիրո և Ներդաշնակության մեջ, որը հնարավորություն կտա ձեր չքնաղ մոլորակին նույնպես ապրել այդ հրաշալի էներգիաների մեջ:

Չէ՞ որ Երկրի վրա տեղի ունեցող ցանկացած տարերային աղետ մարդկանց կուտակած բացասական էներգիայի ահռելի խտացման հետևանքն է:

Այդ իսկ պատճառով էլ Հինգերորդ չափման մեջ չի լինում ո՛չ երկրաշարժ, ո՛չ էլ փոթորիկ ու պտտահողմ, չէ՞ որ այնտեղ տիրում է Լուսիսի և Սիրո էներգիան, որը պարզապես անկարող է առիթ տալու որևէ բնական անոմալիայի դրսևորման:

Երբեք մի՛ մոռացեք այս մասին, զավակներ՝ րա:

Բնության տարերքներ. ՀՈՂ <ԵՐԿԻՐ>

Այսօր ես կպատմեմ երրորդ տարերքի մասին:

Հող <Երկիր>: Այս տարերքը ամենահարազատ, ամենածանոթ, ամենաշոշափելի, ամենանյութեղեն տարերքն է ձեզ համար: Իզուր չէ, որ անվանում եք նրան «Մայր Հող» <Մայր Երկիր>:

Հաճախ ուզում եք փարվել ու սեղմվել նրան, բոկոտն քայլել վրայով, դեմքը թաղել հոտավետ խոտերի մեջ, զգալ իր բույրը տաք ամառային գիշերներին և արևոտ սառնամանիքներին:

Թերևս հենց իր հետ եք դուք ամենից շատ զգում ձեր միասնությունը, ձեր անխզելի կապը: Եվ ես կբացատրեմ, թե ինչու:

Հողը ձեր ստնտունն է: Ինչպես մայրն է կերակրում իր մանկանը, այնպես էլ Հողն է կերակրում մարդուն: Նրա հարստությունները հիրավի անբավ են, վերաբերվե՛ք նրան սիրով ու երախտագիտությամբ, և նա կպատասխանի նույն կերպ՝ պարզնելով ձեզ իր գանձերը:

Սակայն հենց Երկրի հետ են մարդու ամենաբարդ և հակասական հարաբերությունները: Եվ դա լինում է անգիտակցական մակարդակում: Ինչպես հաճախ է պատահում ընտանիքներում՝ ում ամենաշատն ես սիրում, նրան էլ ամենից քիչ ես հաշվի առնում:

Ձեր կապն այնքան ամուր է ու անխզելի, որ անսասան ու անխորտակ է թվում: Այստեղից էլ գալիս է ձեր սպառողական, հաճախ բարբարոս վերաբերմունքը ձեր Երկրի հանդեպ: Ձեզ թվում է, թե նա ամեն ինչ կների, չէ՞ որ անասելի սիրում է ձեզ:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Եվ արդեն քանի-քանի դար նա շարունակ ներում է ձեռք. համբերում, տնքում ու զալարվում է ցավից և անվերջ սպասում, թե երբ ուշքի կգաք, երբ կդադարեք խոշտանգել իրեն՝ «կրծելով» ներսից, ծվատելով մարմինը, զրկելով իրեն բնական հարստություններից:

Վաղուց ի վեր ձեր սերը դադարել է փոխադարձ լինելուց: Եվ ձեր Երկիրը համարձակվեց դիմել մինչ այժմ չտեսնված մի փորձարկման: Որպեսզի փրկի իրեն և նրանց, ովքեր իսկապես սիրում են իրեն, նա սկսեց իր վերելքը դեպի Հինգերորդ չափում, որտեղ ո՛չ ինքը, ո՛չ իր հետ տեղափոխված մարդիկ չեն ունենա ցավ ու տառապանք, որտեղ իրենք իսկապես կդառնան մեկ անբաժանելի ամբողջություն, որտեղ կապրեն Լույսի և Սիրո բարձր էներգիաների մեջ:

Եվ այն, ինչ կատարվում է հիմա ձեր Երկրում, հաստատում է, որ այդ փոփոխություններն ընթանում են իրենց ողջ թափով:

Բոլոր փոթորիկները, պտտահողմերը, երկրաշարժները, ջրհեղեղները, հրաբխային ժայթքումները, բնական անոմալիաները մարդու անխուսափելի հատուցումն են իր արարքների, իր «ստնտու մորը» ցուցաբերած անշնորհակալության համար:

Բայց հավատացեք, սիրելիներս, դա վրեժխնդրություն չէ, նա չի պատժում իր անտարբեր զավակներին: Դա սոսկ միջոց է ինքնապաշտպանության:

Եվ նրա գործողությունները կամայական չեն այն պարզ պատճառով, որ ինչքան էլ ձեզ սիրի, իր ուժերից վեր է կասեցնել պատճառի և հետևանքի օրենքը: Ինչ ցանես, այն կհնձես. . .

Ձեզ մնում է միայն գիտակցել դա, սիրելիներս, և ողջ հոգով ընդունել Երկրի վրա ընթացող ճակատագրական փոփոխությունները, իսկ հետո ընտրություն անել՝ գնալ Հինգերորդ չափում ձեր Երկրի հետ միասին, թե լքել նրան՝ եռաչափ աշխարհում կյանքը շարունակելու համար, բայց արդեն ուրիշ մոլորակների վրա:

Եվ այդ ընտրությունը ձեր Հոգի՛ն պիտի կայացնի: Նա՛ է ձեր գլխավոր խորհրդատուն և գլխավոր օգնականը: Ականջալու՛ր եղեք նրան, զավակնե՛րս:

Բնության տարերքներ. ԿՐԱԿ

Իսկ այսօր կգրուցենք բնության չորրորդ տարերքի մասին:

Կրակ: Ձեզ ջերմացնողը, ձեր տները տաքությամբ ու հարմարավետությամբ լցնողն է Կրակը: Բայց երբեմն նա վերածվում է զարհուրելի, անկառավարելի մի տարերքի, որը սոսկ մահ ու ավեր է սփռում:

Կրակի տարերքն իր մեջ կրում է Արեգակի էներգիան, որը, իր նման, կարող է լինել թե՛ քնքուշ ու ջերմ, թե՛ չար ու մոխրացնող:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Ուրեմն ո՞րն է Կրակի բնությունը, ո՞րն է նրա նշանակությունը:

Սկսենք նրանից, որ Կրակը Երկրի վրա հայտնվել է ավելի շուտ, քան ծնունդ է առել կյանքը, ձեր մոլորակում այն գոյություն է ունեցել հրե լավաների՝ հրաբուխների տեսքով, որոնք աստիճանաբար «քուն են մտել»:

Եվ դա եղել է այն պատճառով, որ ձեր մոլորակն ընտրվել է որպես անօրինակ մի փորձարկման վայր և նրա վրա սկսել են ստեղծվել պայմաններ կենդանի էակների կեցության համար:

Սակայն հրաբուխները, որոնք Աստվածային գիտակցություն ունեն, շարունակել են ապրել իրենց ուրույն կյանքով և կատարել իրենց երկրային առաքելությունը՝ «բաց թողնել գոլորշին», երբ Երկիրը սաստիկ «եռում է»:

Այդ «եռքի» պատճառները կարող են շատ տարբեր լինել՝ երկրակեղևի ներքին պրոցեսներից մինչև մարդկային հասարակության ներքին սոցիալական պայթյունները:

Մարդիկ, սովորելով հայթայթել և գործածել Կրակը իրենց պետքերի համար, հետզհետե սկսեցին միաստիկական նշանակություն հաղորդել նրան՝ ինտուիտիվ կերպով գիտակցելով նրա Աստվածային ծագումը:

Հենց այդտեղից էլ ծնվել է մոմավառության ավանդույթը՝ Բարձրագույն Ուժերին դիմելու ժամանակ:

Դա է պատճառը, որ դուք այդքան սիրում եք Կրակին նայել. նա բառիս բուն իմաստով հմայում է ձեզ՝ կարծես բացահայտելով ուրիշ աշխարհներ:

Կրակով (վառվող մոմերով) դուք մաքրում եք ձեր կացարանները՝ քշելով Մութ ուժերին: Ձեր խորքային հիշողությունը պահում է այն գիտելիքը, որ նա սրբազան է:

Ուրեմն ինչու՞ է այդ Աստվածային կրակը երբեմն վերածվում անողորմ սպանողի՝ ոչնչացնելով իր ճանապարհին պատահած ամեն ինչ:

Այդ ամենը տեղի է ունենում, սիրելիներս, նույն պատճառով, ինչ պատահողմերն ու փոթորիկներն են գալիս Երկիր. երբ բացասական էներգիայի խտությունը գերազանցում է Երկրի բնականոն գոյության համար թույլատրելի նորմերը:

Երբեմն հրդեհների պատճառներն այնքան խորն են, որ անկարելի է հասկանալ մարդկային գիտակցությամբ: Լոկ Ծառայության ելած ամենավսեմ հոգիները կարող են բացահայտել ողբերգական ելքով որևէ իրադարձության պատճառա-հետևանքային շղթան:

Իսկ ինչպե՞ս բարեկամանալ Կրակի հետ, գավակնե՛րս:

Այստեղ էլ ձեզ կօգնի դարերով փորձված միևնույն դեղատոմսը՝ ապրել սիրով և համաձայնությամբ ինքներդ ձեր և շրջակա աշխարհի հետ:

Լույսի և Սիրո էներգիան այնքան զորավոր է, որ ունակ է կասեցնելու նույնիսկ Կրակը:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Հիշեք, թե որքան հրաշքներ են հայտնի մարդկության պատմությանը, երբ սոսկալի հրդեհների մեջ անձեռնմխելի են մնում Սուրբ Մասունքները, երբ հրե տարերքը կանգ է առնում վանքերի կամ արդար մարդկանց տների պատերի առջև:

Հիշե՛ք, սիրելիներս, որ երբ ձեր հոգիներն ու դիտավորությունները մաքուր են, երբ համակված եք Լույսի և Սիրո էներգիաներով, դուք ի զորու եք սանձելու ցանկացած տարերք, նույնիսկ այնքան ավերիչ և վտանգավոր, որքան Կրակի Տարերքն է:

Օրհնում եմ ձեզ դրա համար, զավակներ՝ րա:

Բնության տարերքներ. ՄԵՐ

Այսօր ես ուզում եմ ամփոփել իմ նախորդ չորս ուղերձները բնության տարերքների մասին:

Ինչպես արդեն հասկացաք, նրանք բոլորն ունեն Աստվածային գիտակցություն, ինչպես և դուք, նշանակում է՝ դուք բոլորդ, իբրև Տիեզերքի մասնիկներ, ՄԵՎ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ եք նրանց հետ միասին: Նրանք կախված են ձեզնից, ինչպես և դուք՝ նրանցից:

Եվ այսօր մենք կխոսենք, թե ինչպես կարելի է խաղաղությամբ և համաձայնությամբ գոյակցել նրանց հետ:

Հիմա, երբ դուք բոլորդ շարժվում եք դեպի Հինգերորդ չափում, շատ կարևոր է, որ ձեր գիտակցությունն արձագանքի բոլոր չորս տարերքների գիտակցությանը:

Ահա այստեղ է, սիրելիներս, որ ձեզ օգնության կգա հինգերորդ տարերքը, որը միշտ ապրել է Երկրի վրա՝ մնալով չճանաչված, և միայն հիմա է սկսում իր օրինական տեղը նվաճել: Լոկ նա՛ կարող է իրագործել այդ հրաշքը՝ ներդաշնակություն հաստատել Հողի <Երկրի>, Ջրի, Օդի և Կրակի տարերքների հետ ունեցած ձեր հարաբերություններում:

Հավանաբար արդեն կռահեցիք, որ դա Սիրո տարերքն է՝ բոլոր տարերքների Թագուհին, խաղաղության և անդորրի Աստվածուհին Երկրի վրա և համայն Տիեզերքում:

Ինչու՞ եմ նրան անվանում տարերք: Որովհետև, սիրելիներս, նա ծնունդ է առել Երկրի վրա կյանքի հետ միասին, իբրև մեկը նրա գլխավոր բաղադրիչներից: Ու թեև ժամանակի ընթացքում մերժվել է շատերի կողմից, իր ուժը, սակայն, բնավ չի կորցրել:

Նա միշտ ապրել է մարդու սրտում և հոգում: Պահել է իրեն այնպես, ինչպես բնության մյուս տարերքները՝ մերթ հանդարտվելով, մերթ ծավալվելով հսկայական չափերով:

Բայց, ցավոք սրտի, բազում «ինքնակոչներ» են սկսել քողարկվել նրա անունով՝ սնափառությունը, սեփականատիրությունը, խանդը, իշխանությունը, տարփանքը և ուրիշներ:

«Վերածնունդ» հոգևոր զարգացման կենտրոն

Նրան փորձել են պարփակել եռաչափության շրջանակում, «սեր» բառի մեջ ներդնելով ինչ ասես՝ բացի իր իսկական՝ Աստվածային էությունից:

Դա տեղի է ունեցել այն պատճառով, որ Սերն այնքան բազմակողմ է, որ գործնականորեն անհնար է նրա սահմանումը տալ: Սերն անկարելի է նկարագրել բառերով, Սերը կարելի է միայն զգալ: Նա նման է առ Աստված ունեցած հավատին:

Եվ այդուհանդերձ ես կփորձեմ բնութագրել հինգերորդ և ամենակարևոր այս Տարերքը:

Նա ձեր Հոգին է՝ մաքրամաքուր, առանց եռաչափ աշխարհի մրուրի:

Նա ձեր Սիրտն է, Երկրի սրտի հետ համաչափ բաբախող:

Նա ձեր աչքերն է, Երկրին եղած ամենագեղեցիկը տեսնող:

Նա ձեր ականջներն է, Երկնային ոլորտների՝ Երկրում մարմին առած մեղեդին լսող:

Նա ձեր շուրթերն է, քնքուշ խոսքեր արտաբերող:

Նա ձեր ձեռքերն է, սիրելիներին շոյող:

Նա ձեր ոտքերն է, Երկրի մայրական գորովը զգացող:

Նա ձեր բովանդակ կյանքն է՝ իր ամենահրաշալի դրսևորումներով:

Եվ եթե սովորեք կառավարել Սիրտ տարերքը, աշխարհի ամենաերջանիկ մարդը կլինեք:

«Ինչպե՞ս կառավարել նրան», - կհարցնեք դուք:

Իսկ ողջ գաղտնիքն այն է, զավակներս, որ նրան պետք չէ կառավարել:

Հարկավոր է ԱՊՐԵԼ նրանում:

Հարկավոր է կյանքում ամեն բուպե, ամեն ակնթարթ ԿԵՆԱԼ նրանում:

Հարկավոր է ԼՈՂԱԼ նրա մեջ, վայելել նրա ջերմությունն ու քնքշանքը:

Հարկավոր է ամբողջովին ԼՈՒԾՎԵԼ նրանում:

Հարկավոր է ԴԱՌՆԱ՛Լ Սիրտ տարերք:

Եվ ես օրհնում եմ ձեզ դրա համար, զավակներ՝ րս:

Ձեզ անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ
